

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ԱԳՐՈՅՈՒՅՈՒՄՆԵՐ

ՆՇԵՆՈՒ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ
ՄԾԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

634.5

11-50

658

11 Karpnuz me

4 Sch 4 tiefe

4-10-12-14-16-18-20-22-24-26-28-30-32-34-36-38-40-42-44-46-48-50-52-54-56-58-60-62-64-66-68-70-72-74-76-78-80-82-84-86-88-90-92-94-96-98-100

5.85

634.55

7-50

Հ. ՊԱՏՐԱՍՅԱՆ

ԱԳՐԱՑՈՒՑՈՒՄՆԵՐ
ՆՇԵՆՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



252
A 2788

А. ПЕТРОСЯН
АГРОУКАЗАНИЯ
по выращиванию миндаля
(на армянском языке)
Аргиз 1941 Ереван

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Քաղցր նշենին Հայկական ՍՍՌ-ի կոլխոզների համար հոր և գրեթե անծանոթ կուլտուրա է. նրա զարգացումը Հայաստանի մի քանի շրջաններում միայն վերջին 2—3 տարիներումն է սկսվել, այն էլ շատ սահմանափակ տարածության վրա. Մինչ այդ՝ հատուկ կենտ քաղցր նշենիներ էին լինում. անհատ այգիտերերի այգիներում, Այսպիսով քաղցր նշենու կուլտուրայի մշակությունն անծանոթ է մեր կոլխոզներին և կոլխոզնիկներին:

Հայաստանի մի շարք շրջաններ և կոլխոզներ լայն հնարավորություններ և հեռանկարներ ունեն այդ բան-գարծեհ և արդյունաբերական նշանակություն ունեցող կուլտուրան զարգացնելու ուղղությամբ:

Կառավարության կողմից հաստատված պլանի համաձայն, որը բղխում է «Հայկական ՍՍՌ-ում խաղողագործությունը, պտղաբուծությունը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնարկումների մասին» ՍՍՌ-ի Ժողկոմսովետի և ՀամԿ (բ)Պ Կենտկոմի 1940 թ. սեպտեմբերի 6-ի պատմական որոշումից, 1941—1944 թ. թ. ընթացքում Հայկական ՍՍՌ-ում տնկվելու են նշենու 1000 հեկ. այգիներ:

Այսպիսով ներկա գրքույկը, որ նկարագրում է նշենու կուլտուրայի մշակման ագրո-ձեռնարկումները, կոլխոզ-ների և կոլխոզնիկների համար անբաժնշտ ձեռնարկ է համդիտում:

Այս աշխատության հեղինակը Հայկական ՍՍՌ Հոգ-
ժողովմաստի Պտղարանջարաբուժական վարչության երի-
տասարդ ագրոնոմ ընկ. Պետրոսյանը գործադրել է բոլոր
ջանքերը՝ կոլտոգների համար մատչելի լեզվով շարա-
դրելու ֆաղցր նշանու կուլտուրայի, նրա մշակության
վերաբերյալ ագրոտեխնիկական հիմնական միջոցառում-
ները։ Անշուշտ, այս գրույկը մեծ օգուտ կարող է տալ
մեր կոլտոգներին և կոլտոգներից, որոնք օգտվելով
այդ գիտելիքներից, հնարավորություն կունենան գիտու-
թյան տվյալների համաձայն զարգացնելու նշանու կուլ-
տուրան և ապահովելու նրա բարձր բերքատվությունը։

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ



Պտղարուծությունը մեր երկրում հանդիսանում է սոցիալիստական գյուղատնտեսության կարևորագույն և արժեքավոր ճյուղերից մեկը:

Արտադրության և աշխատավոր բնակչության հարատև աճը հրամայական պահանջ է ներկայացնում էլ ավելի լայնացնելու պտղատու այգիների տարածությունը:

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Ժողովոսովետի և ՀամԳ(Բ)Պ Կենտկոմի 1940 թ. սեպտեմբերի 6-ի «Հայկական ՄՍՌ-ում պտղարուծությունը, խաղողագործությունը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնարկումներն մասին» պատմական որոշումը մեծ վերելք է ստեղծում պտղատու և խաղողի այգիների տմենալայն զարգացման և ընդարձակման համար:

Այդ որոշումը քաղաքական և տնտեսական մեծ նշանակություն ունի. այն հանդիսանում է հետագա աշխատանքի մարտական ծրագիր՝ մեր կոլտոգային գյուղատնտեսության նոր վերելքի ասպարիզում:

Սովետական կառավարության և ՀամԳ(Բ)Պ

Կենսակամի պատմական որոշումը մեր
ռեսպուբլիկայի և կոլտոզնիկների առաջ դը-
նում է մեծ և պատասխանատու ինդիւ-
շայանտանում 1941—1944 թ.թ. պետք է հիմ-
նըվեն նոր պողատու այգիներ 20 հազար հեկ-
տար տարածությամբ, որից 1000 հեկտար
նախատեսվում է տնկել միայն նշենի, որի
զննվացումը խոշոր նշանակություն ունի
մեր ժողովրդական տնտեսության համար

Բազմապիսի և բազմատեսակ պտղատու
կոլտուրաների շարքում նշենին բավական
պատվավոր և գնահատելի տեղ է զբաղում

Նշենու պտուղները թարմ, ինչպես չոր
վիճակում իրենցից ներկայացնում են չափա-
զանց արժեքավոր և օգտակար սննդայնությ,
որովհետեւ նրանք մի շարք սննդատու նյու-
թեր են պարունակում: Այսպես՝ նշենու
պտղի միջուկում կան 50—60% ճարպային
և 18—20% ազոտային նյութեր, որոնք
ամենատնտեսաբար նյութեր են մարզու հա-
մար

Բացի թարմ վիճակում դործադրվելուց,
նշենու պտուղն օգտագործվում է նաև զա-
նազան քաղցրահամ խմիչքների, դեղորայք և
եթերային յուղեր պատրաստելու համար

Նշենու պտուղների նշանակությունն
առանձնապես մեծ է տեխնիկական և հատկա-
պես հրուշակեղենի արդյունաբերության
համար, ուր նա հանդիսանում է կարևորա-
գույն և արժեքավոր նյութերից մեկը, օրի-

Նաև՝ խմորեղենների, կոնֆետների և դանտ-
դան քաղցրավենիքների պատրաստման հա-
մար, Շատ արագ աճող մեր հրուշակեղենի
արդյունաբերությունը կարող է կլանել մեծ
քանակություն մարջ, որի նկատմամբ մեծ
պահանջներ է առաջադրում:

Բացի այս բոլորից, նշենու բնափայտը,
շնորհիվ իր ամրության, օդաազսրծվում է
տնային լավորակ կահկարասիներ և այլ
ուտաղձազսրծական պարագաներ, պատրաս-
տելու համար:

ՆՇԵՆՈՒ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նշենին երկարակյաց բույս է, կյանքի միջին տևո-
րությունը հասնում է 50—60 տարվա, լավ խնամքի և
մշակության դեպքում կարող է էլ ավելի երկար ապ-
րել:

Նշենու բարձրությունը հասնում է մինչև 12—15
մետրի:

Ունի նշտարած և կամ երկարավուն ձվածիր, տալ-
րեր չափի որվածությամբ աստամնավոր տերևներ,
վերջիններս ձմեռը թափվում են:

Նշենիներն ցաննում են հնգատիպ-երկսեռ ծաղիկ-
ներ: Ծաղիկները դլիավորապես դարդանում են չիվերի
ծայրերին, 2—4, երբեմն 6—7 հատ միասին: Նրանց
բաժակաթերթիկները լինում են կանաչագույն, իսկ
պսակաթերթիկները սպիտակ, քաղ վարդագույն:

Նշենին ունի ճշուգումորված արմատներ, որոնք խորը տարածվում են հողի մեջ:

Նշենու պտուղը ձվաձև է, կողքերից սղմված. արտաքինից ծածկված է լինում մաշկանման պտղապատիճով: Վերջինս ուտելու համար միանգամայն անպիսաց է:

Պտղապատիճը հասունանալուց հետո շատ հեշտությամբ անջատվում է պտղից և թափվում:

Պտղի միջուկը ծածկված է լինում բարակ, շագանակադուրյա մաշկով: Պտուղներն սկսում են հասունանալ օգոստոս ամսից սկսած. կան ուշահաս սորտեր, որոնց հասունացումը ձգձգվում է մինչև սեպտեմբերի 10—15-ը:

Նշենու պտուղները լինում են ամրակեղև և հաստակեղև Կան այնպիսի սորտեր, որոնց պտուղը շատ բարակ կեղև ունենալու շնորհիվ, հեշտությամբ մատներով ջարդվում է (օրինակ՝ նոնալարել, նոնալյուս-ուլտրա, քյադգի բադամ և այլն):

Հայաստանում տարածված նշենու սորտերը գլխավորապես հաստակեղև են. միայն վերջին տարիներումն է, որ տնկվում են բարակ կեղև ունեցող սորտեր:

Համեմատած մյուս պտղատու ծառերի (օրինակ՝ ձիթանենու, գեղձենու) հետ, նշենին ավելի շուտ է ծաղկում: Սովորաբար նշենիները ծաղկում են մարտի երկրորդ կեսից սկսած, իսկ որոշ տաք երկրներում նույնիսկ մարտ ամսի սկզբներին:

Հայաստանում — Մեղրու, Ալավերդու, Նոյեմբերյանի շրջաններում, որտեղ ներկայումս կան բերքատու ծառեր, նշենիները ծաղկում են մարտի վերջերին, իսկ Նրեանի, Աշտարակի և Կոտայքի շրջաններում — ապրիլ ամսի սկզբներին:

ՆՇԵՆՈՒ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նշենին պատկանում է նշենիների ընտանիքին. նրա հայրենիքն Ասորիքն է համարվում:

Նշենին լայն չափով տարածված է Խալիսայում, Իսպանիայում, Ֆրանսիայում և Թուրքիայում: Այդ երկրներում նշենին այնքան ուժեղ չափով է տարածված, որ յուրաքանչյուր տարի տասնյակ հազար տոննաներով բերք են ստանում և արտահանում ուրիշ պետություններ:

ՍՍՏՄ-ում նույնպես տարածված է նշենին, ինչպես օրինակ՝ Միջին Ասիայի հարավային մասերում — Ղազախստանում, Ուզբեկստանում և Կիրգիզիայում: Այստեղ ամբողջ անտառներով տարածված են թե վայրի և թե կուլտուրական սորտեր:

Անդրկովկասում, գլխավորապես Ապշերոնյան թերակղզու շրջակա գյուղերում զգալի չափով տարածված է նշենու կուլտուրայի մշակությունը: Վերջին տարիներում այնտեղ խոշոր ուշադրություն է դարձվում նշենու դարգացմանը:

Հայաստանում նույնպես սահմանափակ քանակությամբ տարածված է նշենին. օրինակ՝ Մեղրու, Ալավերդու, Նոյեմբերյանի, Գոտայքի, Երևանի և Աշտարակի շրջաններում. այստեղ նշենիները տարածված են ցրված վիճակում:

Մեղրու և Ալավերդու շրջաններում, բացի կուլտուրական սորտերից, կարելի է հանդիպել նաև վայրի — զառք միջուկ ունեցող սորտերի, որոնց պտուղն օգտագործ-

վում է ղեկորայքի համար, ինչպես և տնկարանային տնտեսություններում որպես սերմացու:

Վայրի կամ վայրենացած վիճակում նշենին մեծ անաքանություններ է գրավում Ղաբարաղլարի բլուրների արևակեղ, անջրդի, քարքարոտ լանջերում:

Հողային պայմաններ.—Նշենին, համեմատած մյուս պտղատու տեսակների հետ, հողի նկատմամբ քիչ սրահանջիտ է. նա հեշտությամբ զարդանում է քարքարոտ, խճային և կմախքային հողերում: Նրա ճյուղավորված արմատները կարող են շատ խորը տարածվել և հասնել մինչև 3—4 մետր խորություն. գրանով է բացատրվում նրա անսնճնահատկությունը,— հողի ստորին շերտից անհրաժեշտ քանակի խոնավություն վերցնել և բալարարվել այդ խոնավությամբ: Նշենին, որպես չորագիմացկուն բույս, կարելի է զարգացնել համապատասխան դոտու այնպիսի վայրերում, որտեղ հնարավոր չէ անցնել պտղատու այլ կուլտուրաներ: Այդ չորագիմացկունությունը և խոնավության նկատմամբ ոչ պահանջկոտ լինելը, նշենու ամենախոշոր առավելություններից մեկն են հանդիսանում:

Ծանր կտվային հողերը միանգամայն անբարենպաստ են նշենու զարգացման համար, քանի որ նման հողերում արմատները հնարավորություն չեն ունենում խորը դնալու և խոնավություն վերցնելու հողի ստորին շերտերից: Այդպիսի հողերում տնկած նշենիները միշտ ենթակա են չորացման կամ նրանց անեցողությունը լինում է շատ թույլ, իսկ այդ իջեցնում է բերքատվությունը:

Էլիմայական պայմաններ.—Նշենին սերում է տաք կլիմա, երկար ու շոգ ամառ և կարճ ու մեղմ

ձմեռ, թեև կարող է դիմաճալ մինչև 20—25 աստիճան (C) ցրտերին:

Որպես չորագիմապկուն բույս, նշենին կարող է դարձանալ այնպիսի վայրերում, ուր մթնոլորտային տեղումները քանակը 300—350 մմ ավելի չի լինում:

Նշենին հաջող բերք է տալիս այն վայրերում, ուր դարունն ուշ է բացվում, որի հետևանքով նա ուշ է ծաղկում ու վաղ զարնան ցրտահարություններին չի ենթարկվում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նշենին հաջող կարող է դարձանալ նախալեռնային և ցածր լեռնային դոտու այնպիսի վայրերում, որտեղ ամառը և աշունը երկարատև են ու զարնան ցրտահարումներ տեղի չեն ունենում:

Հաշվի առնելով նշենու քիչ օրհանջկոտությունը հողային և կլիմայական պայմանների նկատմամբ, համարձակ կարող ենք ասել, որ այդ կուլտուրայի զարգացման համար մենք ունենք միանգամայն բարենպաստ շրջաններ: Այդպիսի շրջաններն են՝ Աշտարակը, Կոտայքը, Ղարաբաղը, Միկոյանը, Ագիգրեկովը, Գորիսը, Ղափանը, Շամշադինը, Երևանը, Իջևանը, Նոյեմբերյանը, Ալավերդին և Մեղրին:

Իհարկե չի կարելի ասել, որ նշված շրջանների բոլոր վայրերում նշենին կարող է հաջող զարգանալ և կանոնավոր բերք տալ:

Հատկապես պետք է խուսափել Ղափանի, Իջևանի, Միկոյանի շրջանների հարթավայրային դոտու գյուղերում նշենի տնկելուց. այդ վայրերում հաճախակի լինում են զարնան ցրտահարություններ:

Նախքան նշենու տնկումներ կատարելն, անհրաժեշտ է մանրադնին կերպով ուսումնասիրել տվյալ

ըրջանը, պարզելու համար, թի ուր միկրոըրջաններն են համապատասխանում նշենու զարգացման պահանջներին, և միայն դրանից հետո ձեռնարկել տնկումներին:

ՆՇԵՆՈՒ ՏՆԿԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

ԻՆՁ Ե ՑՆԿԱՐԱՆԸ

Նախքան նշենու հիմնական այգի գցելը պետք է ունենալ լավ զարգացած և հաջող արմատակալած, պատրաստի տնկիներ: Տնկիներն աճեցվում են հատուկ հողամասերում, որոնք պտղատնկարան են կոչվում: Տնկարանները պետք է կազմակերպել այն բոլոր շրջաններում, ուր պետական պլանի համաձայն նշենու այգիներ են գցվելու, հետևապես տնկանյութի պահանջ է զգացվելու: Հարկավոր է հետևել, որ յուրաքանչյուր շրջան տնկանյութի պահանջը բավարարի իր շրջանում կազմակերպված տնկարաններին:

Տնկանյութի փոխադրումը հեշտացնելու և ինքնարժեքն իջեցնելու համար, անհրաժեշտ է տնկարանները կազմակերպել երկաթգծին և խճուղիներին մոտիկ հողամասերում:

ՏՆԿԱՐԱՆԻ ՑԵՂԻ ԸՆՑՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնկարանի տեղի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները.

- ա) հողային և կլիմայական պայմանները.
- բ) դերը և թևուքային ուղղությունը.
- գ) ապահովվածությունը ոսոքման ջրով.
- դ) պաշտպանվածությունն ուժեղ քամիներից:

Տնկարանի տեղն անպայման պետք է լինի հարթ,
տուանց խորդուբորդութունների, որպեսզի մշակման
աշխատանքները հեշտությամբ կատարվեն։

Անհրաժեշտ է, որ տնկարանի համար առանձնաց-
վելիք հողամասն ունենա աննշան թեքություն դեպի
հարավ-արևմուտք, արևմուտք կամ հարավ։ Այդպիսի
հողամասերում քույսերն իրենց լավ են զգում և ցրտե-
րից չեն տուժում։

Նպատակահարմար է տնկարանի տեղն ընտրել դեռե-
րի հովիտներում և ընդհանրապես լեռներով պաշտպան-
ված հարթավայրերում, քանի որ նման վայրերում
քամիների հոսանքներ չեն լինում, ջերմությունն ավելի
բարձր է, հեռակապեմ փնկիկների աճեցողությունը փար-
թամ է լինում ու ստացվում է լավորակի, ստանդարտ
տնկանյութ։

Տնկարանի համար պետք է ընտրել ավազա-կավա-
յին, կավա-ավազային, թեթև, սննդարար նյութերով
հարուստ հողեր։ Նման հողերի վրա տնկիկները հաջող ու
տրաք են աճում։

Տեղի ընտրության ժամանակ ոչ միայն ուշադրու-
թյուն պետք է դարձնել հողի, այլև կենթահողի վրա,
վերջինս պետք է ունենա լավ ջրաթափանցկություն,
որպեսզի ավելորդ ջրեր չկուտակվեն և չխանդարեն
տնկիկների արմատների նորմալ աճեցողությանը։

Տնկարանի հողամասն, անպայման պետք է ապահով-
ված լինի ռոտզման ջրով։

Անհրաժեշտ է, որ հողամասը պաշտպանված լինի
ցուրտ և ուժեղ քամիներից։

Պետք է խուսափել այն վայրերում տնկարաններ
կազմակերպելուց, ուր հողը ճահճային է, կամ քար-

քորստ և չպտ աղքատ, և ուր ստուրերկրյա ջրերը մուտիկ են հոսի մակերեսին:

ՏՆԿԱՐԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՅԵՐԱՍՅՈՒՄԸ

Տնկարանի կաղմակերպման առաջնահերթ աշխատանքը, — դա հողամասը նախապատրաստելն է:

Նախքան ցանք կատարելը, տնկարանի հողամասը պետք է նախապատրաստել, այն է՝ խնամքով մաքրել քարերից, քվուտներից, մացառներից և մուխոտներից:

Տնկարանից լավորակ, փարթամ, ինչպես և ուժեղ արմատային սխառն ունեցող տնկանյութ պահանջու համար, անհրաժեշտ է հողամասը պարարտացնել զոմալլով, խառն ալրով կամ հանքային պարարտանյութերով:

Որպես կանոն, մեկ հեկտար հողամասին պետք է տալ 35—40 տոննա դոմադը կամ խառն աղբ, իսկ հանքային պարարտանյութերով պարարտացնելու դեպքում հեկտարին 2—3 ցենտներ ամոնիում և 3—4 ցենտներ սուպերֆոսֆատ:

Գոմաղբով կամ խառն աղբով պարարտացնելն ունի այն առավելությունը, որ քաղցի սննդաբար հույսեր մասակարարելուց, նա լավացնում է հողի սարուկտուրան և հեշտացնում է տնկիների արմատների հաջող զարգացումը:

Վերևում նշված աշխատանքներն ավարտելուց հետո հորկալոր է հողամասը արահատորով կամ ձիու գութանով վարել 30—35 ամ խորությամբ:

Աշնան ցանք կատարելու համար ցանկալի է հողամասը հերկել՝ զորաններից, կամ գանն ամռան կեսին:

Գարնան հերկ կատարելու պեպքում անպայման ստրան
ընթացքում պետք է 2-3 անգամ փոցխել, մոլախորովե-
րը ոչնչացնել խոնավությունը պահպանելու համար:
Ցանքի ժամանակ կատարել 14—16 սմ խորո-
թյամբ կրկնահերկ:

ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱՊԱՅԻՐԱՅԻՆ ՍՈՒՐԵ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Տնկարանային ցանքի համար պետք է ընտրել և
առանձնացնել այնպիսի սերմեր, որոնք միանգամայն
հասունացած և առողջ են: Պետք է խուսափել տհաս
սերմերով ցանք կատարելուց: Այդպիսի սերմերն ունե-
նում են շատ ցածր ծլունակություն:

Նշենք բազմադման համար որպես սերմացու օգտա-
գործում են ղլխավորապես վայրի տեսակների (*Amyg-
dalus Fenzliana*) սերմերը: Նման սերմերից ստացված
վայրակներն ունենում են լավ դարգացած արմատային
սխառն, նրանց վրա արտվաստած կուլտուրական սոր-
տերը ղլմացկուն, երկարակյաց են լինում և ունենում
են փարթամ աճեցողություն:

Բացի վայրի տեսակների սերմերից, ցանքի համար
օգտագործում են նաև կուլտուրական, նշենու սերմերը:

Ցանքի համար առանձնացված սերմերը պետք է լրջ-
նել պարկերի մեջ և պահել չոր պահեստում: մկների
փչացումից ղերծ պահելու համար կախ տալ առնարա-
ղից: Այդ դեպքում պարկերի տարողությունը 25—30 կգ
ավելի չպետք է լինի: Նշենու ցանքը ղլխավորապես
կատարում են աշնանը: Եթե տնրարենպաստ եղանակ-

ների կամ վորևէ այլ պատճառով (սերմերի ուշ ստացում) հնարավոր չի լինում աշնանը ցանք կատարել այդ դեպքում պիտի սերմերը պահել հատուկ պայմաններում կամ ինչպես ասում են՝ ենթարկել ստրատիֆիկացիայի՝ վաղ գարնանը ցանելու նպատակով:

Ստրատիֆիկացիայի համար գետի ավազը վաղօրոք պատրաստում են, լվանալով մաքրում են տիղմից, ապա մեկ ծավալ սերմին խառնում են երեք ծավալ մաքրած դեղնային ավազ: Այդ խառնուրդը լցնում են փայտի արկղների մեջ և դնում պահեստում կամ բնակելի շենքում: Խոնավ վիճակում պահելու համար ավազախառն սերմերին հաճախ պետք է ջուր ցանել: Այնուհետև այդ խառնուրդը պետք է արկղներով թաղել հողի կամ ձյան մեջ, վորևէ շենքի հյուսիսային կողմում, որպեսզի գարնանը ձյան հալքը շատ շուտ չլինի: Ստրատիֆիկացիայի ենթարկած սերմերը մկենդից պաշտպանելու համար պետք է տվյալ վայրը թունավորել:

ՍԵՐՄԵՐԻ ՑԱՆՔԸ

Նշենու ցանքը կատարում են տնկարանում, աշնանը, նախքան ցրտերն ընկնելը և ձյուն գալը. իսկ դարձան ցանում են այն ժամանակ, երբ արդեն հնարավոր է լինում դաշտում աշխատել:

Ցանքը կարելի է կատարել մարզերում կամ առանց մարզերի:

Մարզերը պատրաստում են 40—50 մետր երկարությամբ և 2,70 մմ (վերջինս կարելի է վերցնել նաև 2,40 մմ) լայնությամբ. ապա կողքերից թմբեր են կապում, որից հետո փխրեցնում և հարթեցնում են:

Մարդերում, թմրերին զեւգահեռ, կուլտիվատորով կամ
թե բուկիցով 90 սմ հեռավորութեան վրա անց են կաց-
նում ախոսներ (եթե մարդերի լայնութեանը 2,40 սմ
է, պետք է ախոսները քաշել 80 սմ վրա), որոնցից եր-
կուսն ընկնում է թմրերի տակ, իսկ մեկը՝ մարդերի
ձիշտ կենտրոնում:

Ախոսներում սերմերը պետք է ցանել 15—20 սմ
հեռավորութեամբ և 4—6 սմ խորութեամբ: Յանքից
հետո անմիջապէս պետք է սերմերը հողով ծածկել և
առատորեն ջրել:


Հարթ հողամասերում ցանքը կարելի է կատարել
առանց մարդեր պատրաստելու, առանձին ախոսներում:
Դրա համար հողամասը լավ վրոցխում և հարթեցնում
են, ապա ցանկացած հեռավորութեան վրա ձիու կուլ-
տիվատորով ախոսներ են քաշում և սերմը ցանում:

Վայրի սերմեր ցանելու զեպքում մեկ հեկտարին
զնում է մոտավորապէս 150—160 կիլոգրամ, իսկ
կուլտուրական (քաղցր կորիզ ունեցող) սերմեր ցանե-
լու զեպքում՝ 180—200 կիլոգրամ սերմացու:

ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՇՏՈՒՄ

Դարնանը, նախքան սերմերի ծլելը, տնկարանը հա-
ճախակի պետք է ջրել, այն հաշվով, որ հողը միշտ խո-
նավ վիճակում լինի: Ծլեր երեւալուց հետո տնհրա-
մեշտ է ջուր տալ 10—12 օրը մեկ անգամ: Այնուհե-
տե երբ վայրակները մեծանում և հասնում են 30—40 սմ
երկարութեան, ջուրը տալ 15—20 օրը մեկ անգամ,
նայած հողային և կլիմայական պայմաններին:

Տարվա ընթացքում պետք է առնվազն 4—5 անգամ



քաղհան և փերեցու՜մ կրտսրել: փերեցու՜մ կտտարել
ծիղ և ևւտիվատորով կամ հողո՜ւրադով:

Միշտ պետք է հետեւել, որ տնկարանու՜մ մտրտուսեր
չգարգանան և հողը փռելի մի՛ճակու՜մ լինի:

Ա Ձ Ր Ա Պ Ա Յ Վ Ա Ս Ց

Տնկարանու՜մ յալ խնամք տանելու դեպքու՜մ վայ-
րակներն այնքան են մեծանում, որ հույն տարին,
ամառնը հնարավոր է լինու՜մ աչքապատվաստ անել:

Տնկարանային տնտեսության միջ աչքապատվաստը
պատվաստի ամենատարածված ձևն է:

Կա նաև կարգնապատվաստի ձև. վերջինս կատա-
րու՜մ են դարնանը, գլխավորապես շատ հաստացած
վայրակների և հասակավոր ծառերի վրա:

Նշենու աչքապատվաստ կատարելու ամենալավ ժամ-
կետն օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 10-ն է,
այսինքն՝ հյութաշարժության ամենալավ ժամանակը:
Այդ ժամանակաշրջանու՜մ վայրակի կեղեք շատ հեշ-
տությամբ է բաժանվում բնափայտից: Նշված ժամկե-
տից շուտ աչքապատվաստ կատարելը ցանկալի չէ,
որովհետև աչքերը բացվելով, կարող են շիվեր տա-
րրոնք չեն կարող հագու՜նանալ և ամառնը կցրտահարվեն:
Բացի այդ, պատվաստաշիվերի աչքերը լավ հասունա-
ցած չեն լինի և կպչողակա՜նությունը շատ ցածր կլինի:

ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ՆԱԿԱՊԱՅՐԱՍՏՈՒՄԸ

ՊԱՏՎԱՍՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Նախքան աչքապատվաստի աշխատանքներն սկսելը
պետք է վայրակները նախապատրաստել:

Պատվաստից 4—6 օր առաջ տնհրածեղա է հողածառն
առատորեն ջրել, իսկ մեկ օր առաջ պատվաստակալի
ցողունի ստորին, մինչև 10 սմ բարձրութեան վրա
եղած բոլոր ճյուղերը կտրել և հեռացնել, որպեսզի
պատվաստ անողին չխանգարեն: Միաժամանակ անհրա-
ժեշտ է պատվաստակալների արմատավզիկի մոտ բուկ-
տված հողը զգուշութեամբ հեռացնել, որից հետո ար-
մատավզիկը թաց շորով մաքրել:

ԿՑՐՈՆՆԵՐԻ ՄԹԵՐՈՒՄԸ

Աչքապատվաստի համար կտրոնները (պատվաստա-
շիվերը) պետք է վերցնել պաղարերող, առողջ, բարձրար-
ժեք սորտերի ծառերից, որոնք մտնում են տվյալ շրջ-
ջանի ասորտումենտի մեջ:

Եթե պահանջված արժեքավոր սորտերի քերքատու-
ծառերը բացակայում են, այդ դեպքում կարելի է կտ-
րոններ վերցնել մատղաշ ծառերից, նույնպես կարելի
է օգտագործել նաև տնկարաններում եղած տնկիների
այն շիվերը, որոնք ամռան երկրորդ կեսին հեռացվելու
են օդակալորման հետևանքով:

Աչքապատվաստի համար օգտագործում են միամյա
շիվերի միջին աչքերը, քանի որ դրանք են լինում
հասունացած, ներքևի մասի աչքերը թույլ են զարգա-
ցած, իսկ ծայրի աչքերը բոլորովին հասունացած չեն
լինում և պատվաստման համար պիտանի չեն:

Աչքապատվաստի ժամանակ անհրաժեշտ քանակի
կտրոնները միեկում են պատվաստման օրը, կամ թե
նրա նախօրյակին:

Մթերված կտրոններից անմիջապես պետք է հեռաց-

նել տերեւները, որպէսզի գոլորշիացում տեղի չունենա:

Բողբոջի վրա թողնում են մեկ սանտիմետր երկարությամբ տերեւակոթ: Վերջինս թողնվում է նրա համար, որ պատվաստողը հեշտությամբ աչքը տեղավորի պատվաստակալ կեղևի տակ:

Կտրոններ մթերելուց և տերեւները մաքրելուց հետո, ըստ առանձին սորտերի պետք է հարյուրական հատից փոքր խրձեր կապել, կպցնել պիտակներ (յառլիկներ), ցույց տալով տվյալ սորտի անունը և կտրոնի քանակը:

Կտրոնները պետք է կտրել առավոտյան կամ երեկոյան հով ժամերին:

Մթերած կտրոնները պետք է պահել խոնավ տեղ, թաց շորի մեջ փաթաթած կամ թե կիսով չափ ջուր լցրած ամանի մեջ:

Արգելվում է հիվանդ և թույլ աճեցողություն ունեցող ծառերից կտրոններ վերցնելը:

ԱՋՔԱՊԱՏՎԱՍՑԻ ՑՆԵՆԻԿԱՆ

Այգրապատվաստը չափազանց պատասխանատու աշխատանք է. այդպիսին պետք է հանձնարարել հմուտ մարդկանց, որոնք ծանոթ են այգրապատվաստի տեխնիկային:

Այգրապատվաստը կատարում են այն վայրակների վրա, որոնք իրենց ստորին մասում ունեն մատիտից ոչ պակաս հաստություն (8—10 մմ):

Այգրապատվաստը կատարում են հետեյալ կերպ. վայրակի հյուսիսային կողմից, արմատավզիկի կեղևի վրա T տառի ձևով կտրվածք են անում, ուսյալ պատ-

վաստի դանակով կտրոնից վահանաձև հանում են պատ-
վաստվելիք աչքը բնափայտի բաբակ շերտի հետ միասին
և զգուշությամբ տեղավորում վայրակի վրա, բացված
կեղևի տակ:

Աչքը տեղավորելուց անմիջապես հետո կապողը
պետք է փաթաթանյութով (ճլուպ կամ մաշալա) կապի
և ամրացնի:

Աչքապատվաստը նպատակահարմար է կատարել
առավոտյան և երեկոյան հով ժամերին: Կեսօրվա տաք
ժամերին, ինչպես և անձրևային եղանակներին արգել-
վում է պատվաստ կատարելը:

Աչքապատվաստն ավարտելուց 15—20 օր հետո ստու-
գում են կատարում պարզելու, թե որքան հաջող են
կապել աչքերը:

Ստուգման հետ միասին թուլացնում են կապերը,
որպեսզի վայրակները չսեղմվեն:

Ստուգումից հետո չբռնած վայրակները պետք է
երկրորդ անգամ պատվաստել: Այս անգամ կրկնապատ-
վաստի տեղն ընտրում են վայրակի մյուս կողմից և
առաջինից քիչ ցածր:

Աչքապատվաստ կատարած դաշտը կարելի է ջրել
միայն պատվաստ անելուց 10—12 օր հետո, քանի որ



Նկ. 1. Աչքապատվաստի դանակ:

ջուրը մտնելով նոր
պատվաստած բույսե-
րի վերքերի մեջ, բա-
ցասական ազդեցու-
թյուն է գործում, որի


հետևանքով աչքը հաջող չի կաշում:

Ուշ աշնանը, նախքան ցրտերն ընկնելը, պատվաստ-
ված վայրակների բուկն անհրաժեշտ է տալ, փափուկ
հողով ծածկելով ամբողջ աչքը:

Պատվաստած բույսերի խնամքը.— Տնկարանի այն հողամասը, սրտեղ ամռանն աչքապատվաստ է կատարվել, հաջորդ տարին կոչվում է տնկարանի երկրորդ դաշտ. այստեղ են աճեցվում միամյակները:

Վաղ դարնանը, նախքան բողբոջների բացվելը, այդու սուր դանակով, վայրակների վրա պատվաստված աչքի տեղից 12—15 սմ բարձրությամբ, կտրում են վայրակի վերին մասը: Վայրակի թողած մասը կոչվում է բուծակ կամ եղունգ. բուծակ թողնելն այն նշանակությունն ունի, որ պատվաստած աչքից աճող շիվը կապում են բուծակին և շիվին տալիս են ուղղահայաց դրություն (նկ. 3):

Հետագայում, երբ բուծակի վրա առաջանում են



Նկ. 3. Վայրակի կեղևի T-աձև կտրվածքը. վահանաձև մասի կտրելը կտրոնից, վահանաձև մասը վայրակի կտրվածքի մեջ դրած:

վայրի շիվեր, անհրաժեշտ է դրանց հերեալուն պես հեռացնել: Նրանք աճելով, կարող են կլանել բոլոր հյութերը և խանգարել պատվաստված բույսերի նորմալ սնուժը և աճը:

Երբ պատվաստաշիվը կունենա 10—12 սմ բարձրություն, անհրաժեշտ է նրան հիմքի մոտից ճլուպով կապել բութակին՝ ութ թվանշանի ձևով:

Այնուհետև, երբ շիվը աճում է և հասնում 20—25 սմ, պետք է կրկին կապել բութակին:

Պատվաստաշիվն աճելով, հասնում և փայտանում է, նա կարող է առանց կապի ուղիղ մնալ: Այդ պատճառով օգտագործել սկզբներին կապերն արձակում են և այդու սուր դանակով բութակն ամբողջովին հիմքից կտրում-հեռացնում: Կտրվածքի մակերևույթը պետք է բուրբուրվին հարթ լինի և թեքվածքն աղնիվ շիվի հետ կազմի 45° անկյուն:




Ամռան ընթացքում պատվաստաշիվի բնի վրա մինչև սաղարթի նկ. 3. Բութակին կապված աղնիվ շիվը. ա) բութակ. բ) աջքապատվաստի տեղը. գ) բութակը հեռացնելու (կտրելու) տեղը. դ) պատվաստաշիվը: Երբ կտրվածքն աղնիվ շիվի հետ կազմի 45° անկյուն, այդ կտրվածքը կոչվում են հաստացման շիվեր: Սկզբնական շրջանում պիտի թողնել, որ այդ շիվերն աճեն, որովհետև նրանք

նպաստում են ընդ լայնակի աճմանը. այսուհետև երբ նրանք աճում և հասնում են 20 սմ երկարության, պետք է ծերատել:

Ամռան երկրորդ կեսին հաստացման շրջերը էտում են օղակաձև (նկ 4):

Դարնան, ինչպես և ամռան ընթացքում տնկարանը պետք է ըստ պահանջի ջրել և 4—5 անգամ քաղհա-



ա

բ

գ

դ

նկ. 4. Օղակաձև կտրվածք (ա. միշտ կտրվածք, բ, գ և դ ոչ միշտ կտրվածք):

նեղ ու փխրեցնելը Չպետք է թույլ տալ, որ մուխոտները զարգանան:

Ջանադան տեսակի հիվանդություններ ու վնասատուներ երևալուն պես անհրաժեշտ է անմիջապես պայքար կազմակերպել նրանց դեմ:

ՅԼԿԻՆԵՐԻ ՍԱՂԱՐԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Տնկարանի երկրորդ դաշտում ժամանակին և լավ խնամք ցուցնելու դեպքում նշենիներն այնքան են մեծանում, որ նրանց հնարավոր է լինում հոգին տարվա

ամուսնը ձևավորել և աշնանն ստանալ կանոնավոր սաղարթ ունեցող միամյակներու Լավ աճած տնկիները կարելի է հանել ու տեղափոխել հիմնական տեղում տնկելու համար:

Տնկիների սաղարթի ձևավորումը խոշոր նշանակու-
թյուն ունի նրանց երկարա-
կեցության և բարձր բերքա-
տվության համար:

Սաղարթի ձևավորման մի-
ջոցով մենք կարողանում ենք
տնկիներին տալ այնպիսի ձև,
որոնք նպաստում են բերքա-
տվության բարձրացմանը:

Ձևավորումն ունի այն կա-
րևորությունը, որ ստեղծում
ենք ճյուղերի հիմնական կը-
մախք, որոնք ամուր ներաճած
են լինում բնի հետ. միաժա-
մանակ կարողանում ենք պըս-
ղաշիվերը հավասարաչափ դա-
սավորել սաղարթի հիմնական
ճյուղերի շուրջը:

Տնկարանային տնտեսու-
թյան մեջ տնկիների ձևավո-
րումն ամենահիմնական և պա-
տասխանատու աշխատանքնե-
րից մեկն է: Այդ աշխատանքը
պիտի հանձնարարել այնպիսի
մարդկանց, որոնք ծանոթ են
այդիդորձական աշխատանք-




Նկ. Ծ. Մտի փոփոխված
վիզերային եղանակով ձե-
րավորումը մեկ հիմնական
ճյուղի անկյունով:


ներին, աշխատել են այդ ուղղութեամբ և ունեն որոշ փորձառութիւնն:

Նշենինները սովորաբար ձեւովսրում են փոփոխված լիւերային սխաւեմով և բաժակաձէ:

Այն սորտերը, որոնք ունեն փոխած սաղարթ, ձեւովսրում են փոփոխված լիւերային սխաւեմով: Այդ գեղ-



Նկ. 6. Ծառի փոփոխված լիւերային եղանակով ձեւովսրումը երկու հիմնական հյուսիս անկյունում:



Նկ. 7. Ծառի բաժակաձէ եղանակով ձեւովսրումը:

քում առաջին տարին կենտրոնական առաջատար (լիզեր) շիփի վրա թողնում են 2—3 կողային ճյուղեր, սպիրալ դասավորությամբ և իրարից 25—30 սմ հեռավորությամբ:

Այն սորտերը, որոնք ունեն բրդաձև սաղարթ, ձևավորվում են բաժակաձև:

Նախքան ձևավորման աշխատանքներին անցնելն, անհրաժեշտ է որոշել բնի բարձրությունը: Բնի բարձրությունը նույնպես կապված է սորտերի հետ: Այն սորտերը, որոնց կողային ճյուղերն ավելի փոված են, ունենում են ավելի բարձր բուն, քան բրդաձև սաղարթ ունեցող սորտերը:

Սովորական և բրդաձև սաղարթ ունեցող նշենինների համար բնի բարձրությունը թողնում են 40—60 սմ, իսկ փոված սաղարթ ունեցող սորտերի համար՝ 60—80 սմ:

ՍԱՂԱՐԹԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏՅԵՆԻՆՍՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԼԻՆԵՐԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Ամռան երկրորդ կեսին, երբ հողային լավ պայմանների հետևանքով տնկիներն աճել և հասել են որոշ բարձրության և հնարավոր է ձևավորել ու ստանալ մեկ կամ երկու կողային ճյուղ ունեցող տնկի, ծառերի վրա վերցնում են համապատասխան մորտի համար սահմանված բնի բարձրությունը, դրան ավելացնում են 3—5 բողբոջ և սրանցից բարձր շիփն էտում են:

Ձևավորման ժամանակ պետք է որոշել, թե բնի վրա տվյալ տարին քանի կողային ճյուղ պիտի աճեցվի: Եթե միամյա տնկին այնքան էլ ուժեղ չէ, պետք է թողնել մեկ ճյուղ, իսկ եթե տնկին ուժեղ է, անպայման պետք է աճեցվի երկու կամ երեք կողային ճյուղ:

Առաջին պարբերում բնի որոշ բարձրության վրա ընտ-

րում են մեկ առողջ բողբոջ, իսկ երկրորդ զեպքում, բացի բնի վրա ընտրած բողբոջից, ընտրում են 20—30 սմ հեռավորության վրա լավ զարգացած երկրորդ բողբոջը կամ երկրորդ և երրորդ բողբոջը, և ապա վեր թողնում 3—5 բողբոջ ու ծայրի մասն էտում են:

Ամռան ընթացքում այդ բողբոջներն աճում և շիվեր են տալիս: Երբ նրանք հասնում են 15—30 սմ երկարության, այդ զեպքում եթե կողային ճյուղերի համար ընտրված բողբոջներից աճած շիվերը լավ են զարգացած և սաղարթի շուրջը ճիշտ են զաստվորված (45 աստ.), դրանք թողնում են, իսկ մնացածները, բացի կենտրոնական ճյուղից, ծերատում:

Երբ կողային ճյուղի համար թողնված բողբոջից հաջող շիվ չի զարգանում, որը կարողանա ծառայել որպես հիմնական ճյուղ, պետք է ծերատման ժամանակ այն փոխարինել համապատասխան ուրիշ ճյուղով:

Այնուհետև օգոստոսի երկրորդ կեսին երկրորդական ճյուղերը, որոնք ծերատվել են և ծառայում են որպես ծառի հաստացման շիվեր, պետք է «օղակաձև» կտրվածքով հեռացնել:

Այսպիսով հնարավոր է լինում նույն տարվա աշնանը տնկարանում փոփոխված լիզերային եղանակով ձևավորել միամյա տնկիները և աշնանը ստանալ մեկ կամ երկու հիմնական ճյուղի աճեցումով տնկիներ և փոխադրել հիմնական այգում տնկելու համար:

ՏՆԿԻՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԸ

Նշենու այգու հետագա հաջող զարգացումը և նրա բարձր բերքատվությունը խոշոր չափով կախված է նրանից, թե ինչպիսի որակ են ունեցել այն տնկիները:

որոնք ըաց են թողնվել տնկարանից: Այդ պատճառով նախքան այդի տնկելը պետք է լուրջ ուշադրություն դարձնել ըաց թողնվելիք տնկանյութի որակի վրա:

Տնկարանից ըաց թողնվելիք տնկիները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

ա) ունենան բնի անհրաժեշտ բարձրություն, կանոնավոր ձևավորված սաղարթ, լավ զարգացած հիմնական ճյուղեր.

բ) բույսը և սաղարթը պետք է լինեն լավ զարգացած, առողջ և առանց մեխանիկական վնասվածքների.

գ) լավ փնջավոր արմատային սիստեմ՝ 25—30 սմ ոչ պակաս երկարությամբ.

դ) ճշտորեն համատասխան են այն սորտին, վտրի տնվան տակ ըաց են թողնվում:

Եթե տնկարանում եղած տնկիները վերևում նշված պահանջներին չեն բավարարում, ապա պետք է նրանց թողնել տնկարանում և երկրորդ տարին նրանց լավ խնամել, որպեսզի կանոնավոր աճեն և պիտանի լինեն հաջորդ տարին տնկելու համար:

ՏՆՆԻՆԵՐԻ ՀԱՆՍԼԸ ՀՈԴԻՑ (ՏՆՆԱՐԱՆԻՑ)

Եթե տնկիներն այգում տնկվել են աշնանը, ապա պիտի հողից հանել աշնանը, իսկ եթե տնկվել են գարնանը, նպատակահարմար է հանել գարնանը:

Երբ տնկիները հեռավոր շրջաններ են տեղափոխվելու գարնանը տնկելու նպատակով, անհրաժեշտ է նրանց աշնանը հանել, տեղափոխել և ապա պահել հողում:

Տնկիներն աշնանը հողից կտրելի է հանել այն

Վաժմանով, երբ նրանց տերևները դեղնել և սկսել են թափվել ու փայտանյութը լավ հատուկացել է:

Տնչարանում տնկիների վեգետացիան չերկարելու և աշնանը տնկման աշխատանքները չուշանալու համար, տնկիները հանելուց 1—1,5 ամիս առաջ պետք է դադարեցնել ջուր տալը:

Տնկիները հողից պետք է հանել մեծ զգուշությամբ, որպեսզի նրանց արմատները չվնասվեն:

Տնկիները հողից կարելի է հանել հատուկ գութաններիով և ձեռքի բահով:

Խոշոր տնկարանային տնտեսություններում տնկիների հանելը կատարում են գութաններով, իսկ փոքր տնկարաններում՝ բահով:

Տնկիների հանումը բահով կատարվում է երկու հոգու միջոցով:

Տնկիների շարքի մի կողմից 30—40 սմ խորությամբ առու են փորում, մեկ հողի տնկենու ընկից ձեռքով բըռնում է, թեքում առվի կողմը և քիչ քաշում դեպի իրեն, երկրորդը բահով 30—40 սմ երկարության վրա կարում է արմատները, որից հետո առաջինը տնկին զգուշությամբ հանում է հողից:

Տնկիները հողից հանելուց հետո առանց ուշացնելու պետք է խմբավորել. եթե հանելուց հետո անմիջապես չեն տեղափոխվելու, պետք է նորից առվի մեջ թեթևակի թաղել ըստ սորտերի, հետևելով, որ թաղելու ժամանակ սորտերն իրար չխառնվեն:

Եթե տնկիները հանվում են տնկարանից և որևէ պատճառով հնարավոր չի լինում աշնանը տնկել, այդ դեպքում հարկավոր է նրանց թաղել հատուկ խնամքով, որպեսզի ձմռան ընթացքում նրանց արմատները ցրտից չտուժեն:

ՏՆԿԻՆԵՐԻ ՀԱՆՍՎՈՐՈՒՄՆ ԸՆԴՈՒՍՈՒՄԸ

Տնկիւնները մատակա վայրեր փոխադրելու գնաքում, անհրաժեշտ է փաթաթել նրանց, այլ ուղղակի դարսում են ավտոմեքենայում կամ սայլի, ֆուրգոնի մեջ, կանգնած դիրքով: Դարսելու ժամանակ պետք է լինել շատ դժույշ, որ սորտերն իրար չխառնուին:

Փոխադրվող տնկիւնների արմատներն արեւից պաշտպանելու համար հարկավոր է ծածկել բրեզենտով կամ ծղոտով:

Եթե տնկիւնները հետո վայր են տեղափոխվելու, անհրաժեշտ է ծղոտով կամ եղեգնով փաթաթել և հակաՎորել:

Յուրաքանչյուր հակի մեջ տեղավորում են 50—60 երկամյակներ կամ հարյուրական հատ միամյակներ:

Ինչպես հակի ներսում, այնպես և դրսից պետք է տվյալ սորտի անունը և տնկիւնների քանակը ցույց տվող պիտակ (յառլիկ) կպցնել:

ՆՈՐ ԱՅԳՈՒ ՏՆԿՈՒՄԸ

Ինչպես մյուս պտղատու տեսակներին, այնպես էլ նշենաւ նոր այգի տնկելը չափազանց պատասխանատու գործ է:

Պետք է իմանալ, որ այգի տնկելու ժամանակ թույլ տրված յուրաքանչյուր սխալ արտահայտվում է մի շարք տարիներից հետո միայն, երբ մեծ մասամբ հնարավոր չի լինում ուղղել սխալը, որը բացասաբար է անդրադառնում բերքատվության վրա:

Նոր այգի տնկելիս պետք է լրջորեն հաշվի առնել

նրա հետագա զարգացման բոլոր (հողային, տնտեսական, կլիմայական, կենսաբանական և այլն) պայմանները:

ԱՅՐՈՒ ՑԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Նշենու նոր այգի տնկելու համար խոշոր և վճռական նշանակություն ունի հողամասի ընտրությունը:

Հողամասի ճիշտ ընտրությունից է կախված նշենու տնկիների կանոնավոր աճը, նրա հետագա բերքատվության աստիճանը և պրոդուկցիայի որակը. այդ պատճառով էլ հողամասի ընտրության դործին առանձին լուրջ ուշադրություն պիտի դարձնել:

Նշենու այգու համար պետք է ընտրել այնպիսի հողամասեր, որտեղ զարնանը ցրտահարություններ տեղի չեն ունենում:

Նշենու այգու համար ամենահարմար հողամասերն այդ տեսակետից համարվում են լեռների և բլրակների լանջերը:

Հարթավայրերում դարնանային առավոտներն ավելի հաճախ են ցրտեր լինում: Պետք է խուսափել նման վայրերում նշենու այգի տնկելուց:

Նշենու այգու տնկման համար անհրաժեշտ է առանձնացնել այնպիսի հողամասեր, որոնք ունեն հարավային, հարավ-արևմտյան թեքություն: Այսպիսի հողերում լույսի ազդեցությունն, լինչպես և արեգակի ճառագայթների թափանցումն, ավելի քան ուժեղ է, և այդ հանգամանքը նշենու բերքատվության համար խոշոր նշանակություն ունի: Այսպես օրինակ՝ այն ձյուղերը, որոնք ավելի շատ են արևից լուսավորվում, նրանցից շատ բերք է ստացվում:

Տեղի բնաբույսերն հետ միասին պետք է հաշվի տանել հողային պայմանները:

Նշենին հաջող պարզանում է թեթև ավազա-կավային, կավա-ավազային, քարքարոտ և խճային հողերում: Վատ է աճում ու զարգանում այն հողերում, որոնք շատ խոնավ են և որոնց վերին շերտերին մոտիկ են ստորերկրյա ջրերը:

Մյուս կարևոր հանգամանքը, որ առնչուշտ պետք է հաշվի առնել, դա ջրով անպահովվածության խնդիրն է. հողամասը պետք է ապահովված լինի անհրաժեշտ քանակի ջրով. այլապես նա չի ջրվի և տնկիները կչորանան:

ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՅՈՒՄՆ ԵՎ ԵՏՆԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Նշենու այգու համար առանձնացված հողամասը մինչև տնկումներ կատարելը պետք է նախապատրաստել, հավաքել քարերը, արմատախիլ անել մացառներն ու թփուտները և դրանք հեռացնել հողամասից:

Այնուհետև պետք է հողի մակերեսը կանոնավոր հարթել, որպեսզի հնարավոր լինի հետագայում ջրել աչլին, ինչպես և հողի մշակման աշխատանքները մեղեհացնելու ևնթարկել:

Վերևում հիշված աշխատանքներն ավարտելուց հետո պետք է ամբողջ հողամասը վարել դալժանով, թեթև հողերում ոչ պակաս 25—30 սմ, խի ծանր հողերում՝ 30—40 սմ խորությամբ:

Հողամասի համառոտաբաժնի վարելն այն նշանակություն ունի, որ դրանով մենք պայմաններ ենք ստեղծում հողում ափի շատ խոնավություն կուտակելու

և ըստի այդ, հնարավորութիւնս ենք տալիս բույսերի արձատհներին խօրը դնալու և անհրաժեշտ քանակի սննդանշութիւն վերցնելու հոգից:

Տնկումներն աշնանը կատարելու զեղքում հողամասն անհրաժեշտ է վարել դարնանը, իսկ եթե հողամասն զրադված է հացահատիկային կամ թե շարքահերկ բույսերով, վարը պետք է կատարել բերքահավաքն ավարտելուց անմիջապէս հետո:

Տնկումները դարնանը կատարելու զեղքում վարը պետք է կատարել աշնանը:

ՇԱՐՔԵՐԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ՏԱՂԸ

Մինչև տնկումներ կատարելն անհրաժեշտ է նախօրոք որոշել, թե այդու՞մ ծառերի շարքերն ինչ ուղղութիւնս պետք է ունենան:

Շարքերի ուղղութիւնը որոշելիս պետք է հաշիվ առնել այգետեղի կոնկրետ պայմանները և ելնելով այդ պայմաններից, այս կամ այն ուղղութիւնը տալ շարքերին:

Հարթ հողերում, որտեղ ոռոգումն առանձին դժվարութիւն չի ներկայացնում, շարքերը դասավորում են տվյալ վայրի քամիների ուղղութեամբ, իսկ եթե զգալի քամիներ չեն լինում, անհրաժեշտ է շարքերին տալ հյուսիսից-հարավ ուղղութիւն: Նման ուղղութեամբ տնկած ծառերը համեմատաբար համաչափ լույս և ջերմութիւն են ստանում:

Թեք հողերում շարքերն այնպէս պիտի դասավորել, որ այդու կանոնավոր ոռոգումն ապահովված լինի, այսինքն ջուրը շարքերի մեջ հեշտութեամբ, բայց հանդարտ ու համաչափ հոսի և լավ ծծվի հողի մեջ:

Այգու շարքերի ուղղությունը որոշելուց հետո պետք է ձեռնարկել տեղաձևման աշխատանքներին:

Գոյություն ունի այգետնկման երեք ձև. ա) քառակուսի, բ) ուղղանկյուն և գ) շախմատաձև:

Ներկայումս պտղաբուծության մեջ ամենատարածված և ընդունված ձևը քառակուսի տնկումն է:

Քառակուսի տնկումները կատարում են այն հողերում, ուր թեքությունը շատ մեծ չէ: Այս ձևի տնկումը մյուս ձևի տնկումների նկատմամբ այն առավելությունն ունի, որ հողամասի գծադրման աշխատանքներն ավելի հեշտ են կատարվում, տնկիների միջշարքային տարածություններում հողի մշակումը երկու ուղղությամբ է կատարվում և որ ամենակարևորն է, տնկիների արմատներն ամեն ուղղությամբ հավասար են տարածվում և արմատները լիակատար չափով օգտագործում են այգու տարածությունը:

Այն վայրերում, որտեղ այգետեղի թեքությունը մեծ է և հողի մակերեսը (ռելյեֆը) կտրտված, տնկիների կանոնավոր ոռոգման համար հնարավոր չէ վերևում նշված ձևով տեղաձևել և տնկումներ կատարել: Այգու պիսի թեքություն ունեցող այգիները հնարավոր չէ կանոնավոր ջրել: Ջուրը վերևից արագ կհոսի, հողի մեջ չի թափանցի և ամբողջ հողամասը կհեղեղվի:

Նման թեքություն ունեցող հողամասերում այգին տնկելու համար տեղաձևումը և շարքերի ուղղությունը պետք է լինի թեքության հորիզոնական:

Այգու տեղաձևումը կատարում են հատուկ հողաչափական գործիքներով, դրանց բացակայության դեպքում՝ լարերի, պարանների միջոցով:

Հողամասի տեղաձևումը պետք է կատարել այնպես, որ շարքերը լինեն ուղիղ դասավորված:

ՓՈՍԵՐԻ ՓՈՐԵԼԸ ԵՎ ՏՆԿԻՆԵՐԻ ՏՆՆՈՒՄԸ

Տնկիւնները հաջող կպչելու և հետագայում լավ դարգանալու համար անհրաժեշտ է այգետեղում կանոնավոր փոսեր փորել և ապա նոր միայն տնկումներ կատարել:

Որպես կանոն, փոսերը պետք է փորել տնկումներից 15—20 օր առաջ: Նախօրոք փոսերը փորելն այն առավելությունն ունի, որ փորված փոսերի պատերը լավ հողմահարվում են և դրա հետևանքով էլ հողի կառուցվածքը լավանում է:

Փոսերը փորել 80—100 սմ լայնությամբ և 50—60 սմ խորությամբ: Փորելու ժամանակ փոսի վերին շերտի հողն առանձին մի կողմ դարսել, իսկ ստորին շերտի հողը՝ մյուս կողմը:

Մեղրու, Աշտարակի և Երևանի շրջաններում տընկման հեռավորությունը վերջնել 6×6 մետր, իսկ մյուս շրջաններում՝ 5×5 մետր:

Տնկելու ժամանակ պետք է այնպես անել, որ ծառի վիզարմատը հողի մակերեսից 3—4 սմ բարձր լինի, ծառերն ուղիղ տնկվեն և շարքերն ուղիղ լինեն:

ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՆԱԽԱՊԱՅՐԱՍՏՈՒՄԸ ՏՆԵՆԼՈՒ ՀԱՄԱՐ

Տնկիւններն իրենց հիմնական տեղում (այգում) անկիւնից առաջ պետք է լավ ստուգել, թե նրանք որչափ պիտանի են տնկման համար:

Մառազման ժամանակ հարկավոր է լուրջ ուշադրութեամբ դարձնել նրանց արմատային սխառութի վրա: Եթե նկատվում է, որ արմատները վարակված են քաղցկեղ (ռակ) հիվանդութեամբ, կամ տնկաբանից հանելու ժամանակ մեծ վերքեր են ստացել, ապա այդպիսիները պետք է խոտանել, իսկ քաղցկեղով վարակվածներն անսպաճման պրել:

Տնկման համար պետք է ընտրել այնպիսի տնկիկներ, որոնք ունեն առողջ և լավ զարգացած արմատային սխառութ:

Թեթև վնասվածքներ ստացած արմատները պետք է թաքմացնել, կտրելով մինչև առողջ տեղը:

Զուգընթացաբար պիտի կտրել և կարճացնել շատ երկար արմատները և թեթև ծերատել մշուսները, հնարավորութեամբ տալու նոր արմատների առաջացման:

ՏՆԿԵԼՈՒ ՏՆԵՆԻԿԱՆ

Տնկիկների շարքերի կանոնավոր ուղղութեամբ պահպանելու համար տնկուսները պետք է կատարել երկու հոգով. մեկը ծառն ուղիղ բռնած պահում է փոսի մեջ, իսկ մշուսն արմատներն ուղղում է, որպեսզի նրանք հավասարաչափ տարածվեն փոսում, ապա քիչ-քիչ հող լցնում արմատների վրա ու ոտքերով լավ տրորում, հողը լավ նստեցնելու և բաց տարածութեամբ չթողնելու համար:

Փոսն ամբողջովին հողով լցնելուց հետո, ծառերի բների շուրջը բաժակներ են պատրաստում, որպեսզի ջրելիս ջուրը կանգ առնի և շատ ծովի հողի մեջ:

Տնկիկները տնկելուց հետո առանց ուշացման պե-

է նրանց ջրել: Շուտ ջրելը կարևոր է այն տեսակետից,
որ հողը բավ նստի և արմատների արանքներում դա-
տարի տեղեր չմնան:

Որպեսզի տնկիները քամիներէջ չծովեն (թեքվեն)
կամ չկոտորվեն, անպայման պետք է նրանց կողքին
հարավային կողմից հենարաններ տնկել և երկու տեղից
8-ի ձևով կապել: Հենարանները պետք է տնկել մինչև
փոսերի հատակը, իսկ նրանց բարձրությունը պետք է
լինի մինչև սաղարթը:

Աշնանը, ինչպես և դարնանը տնկած ծառերի սա-
ղարթի ճյուղերի ծայրերը վաղ դարնանը մինչև նրանց
բողբոջների բացվելը պետք է էտել՝ դուրըշխացման մա-
կերեսը պակասեցնելու նպատակով: Ուժեղ աճած ծառերի
ճյուղերն էտում են կիսով չափ, իսկ թույլ աճածները
մեկ երրորդ չափով:

ՆՇԵՆՈՒ ԱՅԳԵՏՆԵՄԱՆ ԺԱՄԱՆԵԸ

Նշենու այգին կարելի է տնկել թե աշնանը և թե
դարնանը:

Աշնանը տնկումներ կատարելու դեպքում աշխա-
տանքները պետք է սկսել այն ժամանակ, երբ տնկա-
րանում տնկիների տերեւներն սկսել են դեղնել և թափ-
վել:

Աշնան տնկումները կարելի է շարունակել մինչև
այն ժամանակ, երբ ջերմության աստիճանը զերոյից չի
իջել և հողը չի սառել:

Աշնանը տնկած տնկիները ցրտահարությունից
պաշտպանելու համար պետք է նրանց բուկը տալ՝ դար-
նանը հետ տալու պայմանով:

Դարնան տնկումները պետք է սկսել այն ժամանակ,
երբ հնարավոր է այգում աշխատել: Տնկումները պետք է
ավարտել մինչև ծառերի բողբոջների բացվելը:

ՏՆԿՆԵՐԻ ԴԱՍՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՅԳՈՒՄ ԵՎ ՓՈՇՈՑԻՉՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ինչպես մյուս պտղատու տեսակների, այնպես էլ
նշենու բերքատվության բարձրացման գործում խոշոր
և վճռական նշանակություն ունի սորտերի ճիշտ ընտ-
րությունն ու դասավորումն այգում:

Նշենիների որոշ սորտեր (լանկզոկակի, նոնպլյուս
ուլտրա և այլն) անպայման պահանջում են համապա-
տասխան փոշոտիչներ. կան և այնպիսի սորտեր, որոնք
թեև հնարավորություն ունեն ինքնափոշոտվելու, բայց
չեն ինքնափոշոտվում և անպտուղ են մնում:

Ելնելով այդ հանգամանքներից, անհրաժեշտ է նոր
այգի զցելու ժամանակ մտցնել իրար փոշոտող մի քո-
նի սորտերից բաղկացած կոմբինացիաներ:

Սորտերի ընտրությունը պետք է կատարել այնպես,
որ ոչ միայն փոշոտիչները փոշոտեն հիմնական սորտին,
այլ և իրենք փոշոտվեն հիմնական սորտով:

Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև ընտրված
սորտերի ծաղկման շրջանը. անհրաժեշտ է ընտրել այն-
պիսի սորտեր, որոնք միաժամանակ են ծաղկում, այ-
լապես փոշոտումն իր նպատակին չի հասնի:

Հաջող փոշոտումն ապահովելու համար 2—3 շաբա-
տնկում են հիմնական սորտից և մեկ շաբա փոշոտիչ
սորտից:

Փոշոտումն ավելի հաջող կատարելու համար ան-

հրամեշտ է այդուժ անկել ոչ թե մեկ փոշոտող սարա,
այլ 2—3 փոխադարձ փոշոտող սորտեր:

Նշենու նոր այդի տնկելու ժամանակ ըստ Բիխտերի
պետք է մտցնել իրար փոշոտող ներքոհիշյալ սորտերի
կոմբինացիան:

1. Նիկիտսկիյ բերքատու № 16, նոնպլյուս ուլտրա, IXL

2. Նիկիտսկիյ № 62, Նիկիտսկիյ առաջին, խալական № 62

3. Նիկիտսկիյ № 62, զրեյկ, խալական № 62

4. Նիկիտսկիյ № 62, պրինցեսա, լանդզոկ

5. Նոնպարել, նոնպլյուս ուլտրա, զրեյկ

6. Նոնպարել, Դրեյկ, Նիկիտսկիյ № 62

7. Նոնպարել, Նիկիտսկիյ բերքատու № 16, լանդզոկ

8. Նոնպլյուս ուլտրա, կալիֆորնիական, նոնպարել

9. IXL, նոնպլյուս ուլտրա, կալիֆորնիական:

Նոնպարել և IXL սորտերը, ինչպես Տեխասը և
Լանդզոկը, փոխադարձաբար փոշոտման դեպքում պը-
տուղներ չեն տալիս: Այդ պատճառով շարքերում նրանց
իրար կողքի չի կարելի տնկել:

Նշենու նոր այգեհատունի ժամանակ անպայման
պետք է հիմնական սորտի հետ միասին տնկել 25 տո-
կոսի չափով համապատասխան փոշոտիչներ:

ՆՇԵՆՈՒ ՍՈՐՏԵՐԸ

Մշտական և բարձր բերքատվությունն ապահովելու
գործում խոշոր և վճռական նշանակություն ունի սոր-
տերի ընտրություն կատարելը:

Սորտերն ընտրելիս պետք է առավելություն տալ
նրանց, որոնք ունեն զրական հատկանիշներ, ըստ որում,
նրանք պետք է լինեն բերքատու, տվյալ շրջանի հողա-
յին և կլիմայական պայմաններին համապատասխանող:

Նշենին ունի երկու այլ տեսակ, քաղցր և դառն պտուղ ունեցող: Քաղցր պտուղներն իրենց հերթին բաժանվում են՝

ա) ամուր կեղև ունեցողներին

բ) փափուկ կեղև ունեցողներին:

Ամրակեղև նշենիների պտղի կեղևը լինում է շատ ամուր և առանց որևէ զործիքի հնարավոր է չի լինում ջարդել:

Փափակեղև նշենիների պտղի կեղևը լինում է շատ բարակ, որը հեշտությամբ հնարավոր է ձեռքով ջարդել:

Գոյություն ունեցող բազմազան սորտերից ուսում-



Նկ. 8. Նոնապրեկ:

նաանիված և արտադրություն են հանձնված հետևյալ բովանդակյա արգյունաբերական սորտերը՝

Ն ո ռ յ ա ղ Ե ր և ի .— Ունի միջակ մեծության պտուղ՝ շատ նուրբ կեղևով, պտղի միջուկը խոշոր է, լայն, վիթը և բարձրորակ: Բավականաչափ ցրտադիմացկուն սորտ է. ծառն ունի անկանոն սաղարթ, բարակ, փափուկ ճյուղեր: Ուշ ծաղկող է:

Նոն պլյուս ուլտրա. — Բալական արժեքավոր սորտ է, շնորհիվ խոշոր պտղի և նրա արտաքին լավ տեսքի: Պտղի կեղևը նուրբ է, միջուկն երկարավուն, քաղցր և բարձրորակ: Ծառն ունի փարթամ աճեցողություն. մատղաշ հասակում շիվերը լինում են ուղղահայաց, մի քանի տարի պտղաբերելուց հետո սաղարթն ընդունում է փռված դրություն: Շուտ ծաղկող է:

Այս սորտի բացասական կողմն այն է, որ հողային և կլիմայական անբարենպաստ պայմաններում հաջող չի դարձանում:

Դրեյկ. — արժեքավոր սորտ է. առատ պտղաբերող է և լավ փոշոտիչ է մյուս սորտերի համար:

Պտղի կեղևն ունի միջակ ամրություն. միջուկն



Նկ. 9. Նոնպլյուս ուլտրա:

երկարավուն է, ձվաձև, սերմը քաղցր և դուրսիկան:

Ծառն ունի փռված սաղարթ, բարակ և փարթամ ճյուղերով:

Ուշ ծաղկող սորտերի խմբին է պատկանում, բայց համեմատած այդ խմբի սորտերի հետ՝ ավելի շուտ է ծաղկում:

Ն Ի Լ ի տ ո ս Կ Ի Յ № 62. — Այս սորտն արժեքավոր է այն

աւսակետից, որ ուշ է ծաղկում և ունի լավորակ պտուղ-
ներ:

Պտուղը բաժակա՛ն խոշոր է, ունի տակառի ձև, պտղի
կեղևը բարակ է, միջուկը խոշոր, լայն, լիքը և քաղցր:
Ծառը մեծ է, ունի փարթամ աճեցողություն:

Սաղարթի ճյուղերը բարակ են և փոխած:
Հողի նկատմամբ պահանջկոտ է, ունի միջակ բեր-
քատվություն:

Ն ի կ ի ա ս կ ի յ բ ե ր ք ա տ ու լ. — Չնայած այս սորտը



Նկ. 10. Լանդզուկ:

միջին չափով է ծաղկում, բայց առատ պտղաբերող է.
հողի նկատմամբ այնքան էլ պահանջկոտ չէ, ինչպես
Նիկիտսկիյ № 62-ը:

Պտուղը շատ խոշոր չէ, ունի ամուր կեղև. միջուկը
լիքն է, հարթ, բարակ թաղանթով պատած, քաղցր ու
բարձրորակ:

Ծառն ունի ուժեղ աճեցողություն, ուղղահայաց շիվեր:


IXL. — Այս սորտն ունի բաժակա՛ն խոշոր պտուղ-
ներ, բարակ կեղևով: Պտղի միջուկը խոշոր է, ձվաձև
և երկարավուն:

Շուտ ծագկող է:

Ծառն ունի փարթամ աճեցողություն, ուղղահայաց ճյուղեր:

Այս սորաք կլիմայական անբարենպաստ պայմանների նկատմամբ բավական դժայուն է:

Բացի վերևում նշված եվրոպական և Արիմի սորտերից, որոնք միայն վերջին տարիներում են տարածվել Հայաստանում՝ Երևանի, Կոտայքի և Մեղրու շրջաններում, շատ վաղուց և սահմանափակ քանակությամբ տարածված են մի շարք ամուր և բարակ կեղև ունեցող



Նկ. 11. IXL:

սորտեր, որոնք իրենց պողի մեծությամբ, միջուկի քաղցրությամբ և բարձր որակով արժանի են ուշադրության և կարող են արդյունաբերական նշանակություն ունենալ:

Թեև այդ սորտերը դեռ լրիվ չեն ուսումնասիրված, բայց և այնպես պետք է ընտրել դրանցից ամենալավերը և զարգացնել մեր տնկարանային տնտեսություններում:

ՆՈՐԱՏՈՒՆԷ ԱՅԳՈՒ ԽՆԱՄԻՔ ԵՎ ՄՇԱԼՈՒՄԸ

Այգոււմ նորատունի ծառերի նկատմամբ պետք է հատուկ խնամք տանելը: Վատ խնամքի դեպքում նորատունիները չեն կարող նորմալ զարգանալ, կունենան թույլ աճեցողություն, որի հետեանքով և պտղաբերումը շատ կուշանա:

Նորատունի այգու խնամքը կայանում է նրանում, որ սաղարթի նկատմամբ տարվի հատուկ խնամք, այդին ժամանակին ջրվի և հողամասը կանոնավոր ու խնամքով մշակվի:

Նշված ագրոտեխնիկական ձեռնարկումները պետք է կատարել ճիշտ ժամանակին, այլապես չի ստացվի սպասված արդյունքը:

ՍՍ.Գ.Ա.ՐԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՅՈՒՂՆԵՐԻ ԽՏԸ


Աշնանը և դարնանը տնկած տնկիների սաղարթի ճյուղերն անպայման պետք է էտել նույն տարվա դարնանը:

Էտը կատարում են վաղ դարնանը, մինչև ծառերի հյութաշարժության սկսվելը և բողբոջների բացվելը: Էտի միջոցով հնարավորություն ենք ստեղծում ծառի սաղարթի գոլորշիացման մակերեսը պակասեցնելու և նրա արմատային սխտեմի ու վերերկրյա մասի միջև հավասարակշռություն ստեղծելու համար:

Էտը պետք է կատարել սաղարթի ճյուղերի զարգացման ուժեղացման համաձայն: Ինչքան կողային ճյուղերն ուժեղ են աճած լինում, այնքան էլ նրանց ուժեղ պետք է էտել, այսինքն, նրանց երկարության կեսի չափով: Ընդհակառակը, թույլ աճած ճյուղերն էտում են մեկ երրորդի չափով:

կենտրոնական ճյուղը, սրը բնի շարունակությամբ
է վաղմուժ, պետք է էտել և թողնել ավելի երկար, քան
կտրային ճյուղերը:

Հետագա տարիներում ծառերի ճյուղերի հիմնական



Նկ. 12. Նրկու տարեկան ծառը էտելուց հետո:

կմախք ստեղծելու և ճյուղերի ճիշտ և հավասարաչափ
տարածման համար, պետք է անպայման ամեն տարի

էս կատարել, միաժամանակ հետաքննելով ավելորդ, ակնարկի ստղարթի ներսն աճած, մեկը մյուսին խանգարող ճյուղերը:

**ՓՈՓՈԽՎԱԾ ԼԻԳՆԵՐԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՋԵՎԱԿՈՐ-
ՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԸ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅՎՈՒՄ**

Ձեւավորումը փոփոխված լիգերային եղանակով, որ կիրառվել է տնկարանում, նույն ձևով պետք է շարունակել այգում այն հաշվով, որ ավարտվի 2—3 տարվա ընթացքում:

Վաղ գարնանը նախորդ տարվա աճեցրած կենտրոնական ճյուղի վրա, նայած ծառի աճեցողության ուժեղության, տնկարանում կիրառած ձևով ընտրում են մեկ կամ երկու բողբոջ: Այս ընտրած բողբոջները, որոնցից զարգանում են կողային նոր ճյուղեր, պետք է զտնվեն նախորդ տարում թողած կողային վերջին ճյուղից որոշ հեռավորության վրա և ճիշտ դասավորված լինեն ստղարթի շուրջը: Ընտրած բողբոջներից վեր թողնում են նույնպես 3—5 բողբոջ և ծայրի մասը կտրում են ու հեռացնում:

Երրորդ տարում ձեւավորումը կատարվում է նույն եղանակով, ինչպես և առաջին ու երկրորդ տարում, որով և ավարտված կլինեն ձեւավորման աշխատանքները:

Այսպիսով մենք կունենանք փոփոխված լիգերային եղանակով ձեւավորված ծառեր, որոնք կունենան 5—6 հիմնական ճյուղեր՝ միմյանցից 20—30 սմ հեռավորությամբ և սպիրալ ձևով դասավորված, ամուր ներաճած բնի հետ:

Ձուրը բռնյալի և հատկապես նորատունկ ծառերի զարգացման ֆակտորն է հանդիսանում այդ պատճառով այգին պիտի ջրել նրա վեգետացիայի ամբողջ ժամանակաշրջանում: Ամռան ամիսներին պետք է հաճախակի ջրել: քանի որ դա բռնյալի ամենատեղի աճեցման շրջանն է և նրանք պահանջում են ավելի շատ խոնավություն և դրա հետ միասին ամռան ընթացքում ուժեղ չափով դստրոֆացում է տեղի ունենում հողի մեջ:

Այգին պետք է ջրել այնքան, ինչքան ծառերը կարիք են դրում: Շատ ջրելը երբեմն բացասաբար է անդրադառնում ծառերի վրա: Նրանք հնարավորություն չեն ունենում նորմալ աճելու, տերեւները դեղնում են և թափվում: Ջրելու չափը կախված է տեղի հողային և կլիմայական պայմաններից:


Թեթև, դյուրաթափանց հողերում տնված այգիները պետք է ջրել փոքր նորմայով, բայց շուտ-շուտ, որովհետեւ մի անգամից մեծ քանակությամբ բաց թողնված ջուրը չափազանց խորը կթափանցի հողի մեջ և անմատչելի կդառնա ծառի արմատների համար: Մինչդեռ փոքր նորմայով բաց թողած ջուրը կտարածվի միայն այն շերտում, ուր ծառի արմատներն ափելի են զարգացած: Ծանր, լավ խոնավունակ հողերն, ընդհակառակը, պետք է ոռոգել ավելի մեծ նորմայով, սակայն ուշ-ուշ, ավելի երկար ընդմիջումներով:

Այգիներին ոռոգման եղանակները. — Այգիները ջրելու համար կիրառվում են ոռոգման զանազան եղանակներ, այն է՝ ողողում, բաժակային (բնիմո), ակոսային, օղակաձև և այլն:

Այստեղ մենք կանգ կառնենք ոռոգման երկու հիմնա-

կան հզանակներն ի վրա, սրտնք ավելի շատ են կիրառվում այգիներ ջրելու ժամանակ և ավելի դրական կողմեր ունեն, քան մյուս հզանակները:

Բաժակային (բնի մոտ) ոռոգման հզանակը. — Ոռոգման այս ձևի ժամանակ յուրաքանչյուր ծառի շուրջը բաժակներ են պատրաստում և որոշ



Նկ. 13. Բաժակային (բնի մոտ) ոռոգման հզանակը:

Բարձրությամբ թմբեր կապում, որպեսզի ջուրը բաց թողնելիս շատ ջուր հալաքվի բաժակի մեջ: Այնուհետև ծառաշարքերից 1—1,25 մետր հեռավորության վրա նրանց դուզահեռանց են կացնում փոխադրողակա և ապա ոռոգող առվից ջուրը բաց թողնում:

փոխադրող տառն, ու այդտեղից բաժանում բաժանների մեջ (նկ. № 13):

Ուռուցման այս եղանակը լավ արդյունք կարող է տալ մատուցող այգիներում և այն դեպքում, երբ այն թեթև հողերում է կիրառվում:

Մեծացած (5—6 տարեկան) ծառերը ջրելու այս եղանակն այնքան էլ նպատակահարմար չէ, քանի որ նրանք, մեծանալով, արմատները տարածում են միջշարքային տարածություններում, որոնք չեն ջրվում, և ֆուռում են ծառավ:




Նկ. 14. Նորաստեղծ այգու ուռուցումը ակոսային եղանակով:

Ուռուցման այս եղանակն ունի այն բացասական կողմը, որ հնարավորություն չի տալիս լրիվ մեքենայացնելու այգու շարքերի մեջ կատարվող աշխատանքը: Անհրաժեշտ է լինում յուրաքանչյուր 1—2 ջուրը տալ

լուց հետո ձեռքի հոդուրագներով փխրեցնել բաժակ-
ները:

Ուռղման աղոսային հղանակը.— Այգիների
ուռղման այս հղանակը համեմատած մյուս հղանակ-
ների հետ, ավելի կատարելագործված և ներկայումս
ավելի տարածված է այգեգործական շրջաններում:

Այս ձևի ուռղումը կատարվում է հետևյալ կերպ:
Նորատունկ 2—3 տարեկան այգու ծառաշարքերի
միջև նրանց զուգահեռ անց են կացնում երկուական



Նկ. 15. Այգու ընդհանուր տեսքն աղոսային
հղանակով ուռղելիս:

աղոս: Ակոսները պետք է լինեն ծառերից կես մետր
հեռավորության վրա:

Քանի որ ծառերը մատղաշ են լինում և նրանց ար-
մատները դեռ շատ ճյուղավորված և հեռու տարածված

չեն լինում, այս քանակի ակոսները կարող են միանգամայն բալարարել ծառերը նորմալ ջրելու համար (նկ. 14):

Այնուհետև երեք տարուց հետո, երբ ծառերը մեծանում և նրանց արմատներն ավելի հեռու են տարածվում, անհրաժեշտ է ոռոգման ակոսների թիվն ավելացնել միջնաբաշին տարածություններում:

Ոռոգման այս եղանակն ունի հետևյալ դրական կողմերը.

ա) այս ձևով ոռոգելիս ջուրը դաշտում բաշխվում է համաչափ կերպով.

բ) ոռոգման համար ավելի քիչ ջուր է պահանջվում, քան մյուս եղանակները կիրառելու դեպքում.

դ) լիակատար հնարավորություն է տալիս այդ լիների մշակման բոլոր աշխատանքները մեքենայացնելու:

Հողի մշակումը.— Հողի մշակումը նույնպես կարևոր դեր է խաղում ծառերի հաջող զարգացման գործում:

Հողի մշակման միջոցով մենք կարողանում ենք՝

ա) նպաստավոր պայմաններ ստեղծել նորատունկ ծառերի արմատների ազատ զարգացման համար.

բ) ապահովել օդի թափանցումը հողի ստորին շերտը. առանց դրան ծառերը չեն կարող աճել և զարգանալ.

դ) պահպանել խոնավությունը և պայքարել դուրսը չիացման դեմ.

դ) պայքարել մոլախոտերի դեմ և հնարավորություն չտալ նրանց զարգանալու, քանի որ նրանք շատ սննդանյութեր և խոնավություն են վերցնում հողից:

Ելնելով սրանից, անհրաժեշտ է, որ ամռան ընթացքում այդու հողը պահվի փուխը վիճակում և միանգամայն գերծ մոլախոտերից:

Եթե այդին տնկված է մասսիվ հողամասում և միջ-
շարքային տարածությունները զբաղեցված չեն որևէ
կուլտուրայով, պետք է շարքամիջյան տարածություն-
ները վարել, իսկ բների շուրջը փորել $1-1\frac{1}{2}$ մետր
տրամադծով և ապա բաժակներ պատրաստել:

Վտրի խորությունը կախված է հողային պայման-
ներից և ծառերի արմատային սխառեմի զարգացման
խորությունից:

Ընդհանրապես վարի խորությունը 16 սանտիմետրից
ավելի չպետք է լինի, սրանից խոր վար կատարելով,
մենք վնասած կլինենք արմատներին:

Վարը նպատակահարմար է կատարել աշնանը, որով
լավագույն պայմաններ ենք ստեղծում հողի մեջ ավելի
շատ խոնավություն կուտակելու համար:

Եթե վորեւէ պատճառով հնարավոր չէ աշնան վար
կատարել, այդ դեպքում վարն անպայման պետք է
կատարել վաղ գարնանը:

Գարնան վարի աշխատանքները պետք է ավարտել
մինչև ծառերի արմատների արթնանալը: Վարի աշխա-
տանքներն ուշացնելու դեպքում, մենք ահադին վնաս
ենք հասցնում արմատներին, քանի որ այդ ժամանակ
նրանք սկսում են զարգանալ և յուրաքանչյուր ամ-
նալիսըր վերքը բացատարար է անդրադառնում նրանց
աճեցողության վրա:

Հողի փխրեցումը.— Մոլախոտերի դեմ պայքա-
րելու և հողամասն այգալիսիներից զերծ պահելու համար,
ամռան ընթացքում 4—5 անգամ այդին պետք է զիզ-
ղազով փոցխել. փոցխելու միջոցով ոչ միայն կարելի
է ոչնչացնել մոլախոտերը, այլև խախտել հողի վերին
շերտի մազականությունը և թույլ չտալ նրա մեջ եղած
խոնավության գոլորշիացումը:

Փերեցումը պետք է կատարել 1—2 ջուր տալուց հետո, երբ հողը չորանում և կեղևակալում է:

Եթե այդու ծառերի շարքամիջյան տարածությունները զրաղեցված են միջշարքային կուլտուրաներով, ապա փերեցումը պետք է կատարել ձևաքով և այն էլ բների շուրջը:

ՆՈՐԱՏՈՒՆԷ ԱՅՂՈՒ ՄԻՋԵԱՐԲԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Նշենու նորատունի այդու պտղաբերման շրջանն սկսվում է տնկելուց 5—6 տարի հետո:

Քանի որ նախնական շրջանում նորատունի ծառերն իրենց զարգացման համար օգտվում են շատ չնչին տարածությունից և բացի այդ, նրանց սաղարթն այնքան էլ մեծ ծավալ չի ստանում, նպատակահարմար և միանգամայն օգտավետ է նորատունի այգիների միջշարքային տարածություններն զրաղեցնել որոշ կուլտուրաներով:

Շարքամիջյան տարածությունները որևէ կուլտուրայով զրաղեցնելու համար անհրաժեշտ է նախօրոք հաշվի առնել, թե տվյալ կուլտուրան որքան օգտակար է տնտեսության համար և երկրորդ՝ այդ կուլտուրայի մշակումն արդյոք չի կարող բացասաբար անգրադառնալ հիմնական կուլտուրայի զարգացման վրա:

Միջշարքային կուլտուրաներն ընտրելու ժամանակ պետք է հաշվի առնել նաև նրանց պահանջկոտությունը խոնավության նկատմամբ, ինչպիսի և արմատների առածման խորությունը:

Շատ խորը թափանցող արմատային սխառն ունեցող միջշարքային կուլտուրաների ցանքը նպատակահարմար

չէ, նկատի ունենալով, որ նրանք կարող են կլանել հողի ներքին շերտի մեջ եղած սննդարար նյութերը և խոնավութունը:

Միջնաբային տարածություններում կարելի է ցանել միամյա և բազմամյա խոտաբույսեր, ինչպես և հատապտուղներ, ընդեղեններ և բանջարանոցային կուլտուրաներ:

Բանջարանոցային կուլտուրաներից պետք է ընտրել այնպիսիները, սրոնց ջրեկու վերջին ժամկետը չի անցնում սեպտեմբերի 20-ից:

Բուրբուկին արգելվում է հացահատիկային բույսեր ցանել միջնաբային տարածություններում:

Միջնաբային տարածություններում ցանք կատարելու դեպքում պետք է հետևել, որ ծառերի բների շուրջն ազատ լինի. դրա համար ցանքը կատարվում է ծառերից մեկ մետր հեռավորության վրա:

ԲԵՐՔԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Նշենու այգիների բերքատվության քանակի և որակի բարձրացման հիմնական միջոցառումները հանդիսանում են՝

- ա) այգու հողի մշակումը.
- բ) ջուր տալը.
- գ) պարարտացումը.
- դ) սաղարթի կանոնավորումը.
- ե) պայքարը հիվանդությունների և մնտառատների դեմ:

Այդ ձևանարկումները պետք է սերտորեն շաղկապված լինեն իրար հետ և կատարվեն ժամանակին ու կանոնավոր:

Հաս կատարված կամ սահմանված ժամանակին
չկատարված այդ կամ այն աշխատանքը շատ հաճախ
հակառակ արդյունք է առաջացնում։ Այսպես, ծրինակ՝ երբ
հողի մշակումը, ոռոգումը, պարարտացումն իր ժամա-
նակին չեն կատարվում կամ հիվանդությունների ու
վնասատուների դեմ պայքար չի մղվում, այդ նպաստում
է մոլախոտերի զարգացման և մի շարք հիվանդություն-
ների տարածման, որոնց հետևանքով իջնում է այգու
բերքատվությունը։

Կանգ առնենք այդ ազդեցիկ գործոններից յուրա-
քանչյուրի վրա առանձին-առանձին։

ԱՅՐՈՒ ՀՈՂԻ ՄԵԱԿՈՒՄԸ

Պտղաբեր հասակի նշենու ծառերն ամեն տարի
իբնեց արմատների միջոցով մեծ քանակությամբ սննդա-
նյութեր են վերցնում հողից։ Եթե մենք մշակման մի-
ջոցով այնպիսի պայմաններ չստեղծենք բույսի համար,
որ նրա կողմից յուրացրած սննդանյութերի վախարեն
նորերը կուտակվեն հողի մեջ, եթե հողը երկար ժամա-
նակ անմշակ մնա, պարզ է, որ նրանում կդադարեն
մի շարք բիոքիմիական պրոցեսներ, բույսի արմատների
համար կստեղծվեն շնչառության և սննդանյութերի
յուրացման միանգամայն անբարենպաստ պայմաններ
և այս ամենը բացասաբար կազդի ծառերի նորմալ զար-
գացման և բերքատվության վրա։

Նշենու այգու հողի մշակումն ամենակարևոր աշխա-
տանքներից մեկն է հանդիսանում։

Հողի մշակման միջոցով նպաստում ենք նրա բերրի-
ության վերականգնմանը, նրա մեջ մի շարք կենսական
կարևոր պրոցեսներ ենք առաջացնում։

Այսպես, օրինակ՝ այգու հողի մշակման միջոցով հիմնովին փոփոխում ենք նրա ֆիզիկո-մեխանիկական բնույթը, նպաստելով նրա քաղկացուցիչ համբային աննդանյութերի հողմանահարուխյան ուժեղացմանը։ Այլ խոսքով, նպաստում ենք բույսերին անհրաժեշտ մննդանյութերի կուտակմանը և դյուրամարս դառնալուն։

Մշակման միջոցով նպաստում ենք հողի մեջ կուտակված օրգանական նյութերի և դանսդան մնացորդների քայքայման, հետևաբար՝ դրանց տարրալուծման և կուտակման։

Այգու հողի մշակման շնորհիվ մենք նշանաններ ենք ստեղծում հողի մեջ ավելի շատ խոնավություն կուտակվելու համար։

Վերջապես, հողի մշակումն այն կարևոր և հիմնական միջոցն է, որով մենք ծառերի արմատների համար շրնչառության դյուրին պայմաններ ենք ստեղծում, կանոնավորելով հողի դադային փոխանակությունը շրջապատի հետ։

Այս բոլորից պարզ երևում է, թե նշենու ֆերքի բարձրացման տեսակետից որքան մեծ նշանակություն ունի հողի կանոնավոր մշակումը։

Հաշվի առնելով այդ, այգու հողամասն անպայման պետք է մշակել, այսինքն դութանով հեղկել 10—18 ամ խորությամբ, ամբողջ տարին պահելով սե ցելի տակ, վարը կատարում են աշնանը և դարնանը։

Ավելի նպատակահարմար և օգտակար է վարը կատարել ուշ աշնանը, որովհետև այս դեպքում ավելի լավ է ապահովվում հողի ֆիզիկո-քիմիական կարևոր պրոցեսների ընթացքը։

Աման ընթացքում այգու հողը պենք է պահել

փութիւր վիճակում, որի համար անհրաժեշտ է կուլտի-
վատորով 3—4 անգամ փխրեցում կատարել:

Փխրեցման խորութիւնը կախված է հողի հատկու-
թիւնից և ծառերի արմատների տարածումից:

Ծանր կավային հողերում փխրեցումը պետք է կա-
տարել ավելի խորը, քան թեթեւ հողերում:

Այգու հողը սև ցելի տակ պահելու առավելութիւնն
այն է, որ քիչ խոնավութիւն է դուրըշխանում, որպիսի
հանգամանքը ծառերի համար մեծ նշանակութիւն ունի
և երկրորդ, դա մուլխոտերին դարգանալու հնարավո-
րութիւնն էլ տալիս:

ԱՅԳՈՒ ԶԲՆԼԸ

Այգին պետք է ջրել ժամանակին և լաւատուրին:

Առաջին ջուրը պետք է տալ մինչև ծաղիկելը:

Խստիվ արգելվում է ծառերի ծաղկման շրջանում
այգին ջրել, քանի որ ջրելուց ծաղիկները կարող են
թափվել:

Երկրորդ ջուրը նպատակահարմար է տալ ծաղկա-
թափից 15—20 օր հետո, երբ ծառերն արդեն պտղակա-
լի են և պտուղները դարձել են սխտուր հատիկների չափ:

Հետագայում այգին պետք է ջրել այն ժամանակ,
երբ ծառերը ջրի կարիք են զգում:

Չորային և շոգ շրջաններում այգիները հաճախակի
պետք է ջրել:

Պ Ա Ր Ա Ր Տ Ա Յ Ո Ւ Մ

Ծառը, ինչպես և բոլոր բույսերը, իրենց զարգացման
և պտղաբերման համար անհրաժեշտ սննդանյութերը
վերցնում են հողից:

Բն.յանքի սննդանյութերից ամենակարևորը և հիմնականը հանդիսանում են աղստը, ֆոսֆորը, կալիումը և կալցիումը:

Եթե այդ սննդանյութերի քանակը պակաս է լինում հողում, բույսերը նորմալ չեն աճում, հետևապես և ընկնում է բերքատվությունը: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է այգին պարարտացնել:

Պարարտացման միջոցով ոչ միայն ավելացնում ենք սննդանյութերի քանակը, այլև բարելավում ենք հողի ֆիզիկական դրությունը: Այսպես, օրինակ՝ գոմաղբով կամ խառն աղբով պարարտացրած ծանր հողերն ավելի փուխը են գառնում, լինում են ջրաթափանցիկ և ողի ներթափանցումը բավական հաջող է կատարվում:

Պարարտացման համար ամենալավ նյութեր են հանդիսանում փտած գոմաղբը, խառն աղբը և մոխիրը, ինչպես նաև հանքային պարարտանյութերը:

Պարարտացման չափը կախված է հողի հատկություններից և ծառերի հասակից:

Սովորաբար ընդունված է մեկ հեկտար այգուն տալ 30—40 տոննա գոմաղբ կամ խառն աղբ, իսկ հանքային նյութերով պարարտացնելիս — մոտավորապես 500 կիլոգրամ 14 տոկոսանոց սուպերֆոսֆատ և 400 կիլոգրամ 20 տոկոսանոց ամոնիում սուլֆատ:

Պարարտացման ամենալավ ժամկետն ուշ աշունն է կամ վաղ գարունը:

Պարարտանյութը կարելի է շաղ տալ թե համառոտրած կերպով և թե սաղարթի շուրջը:

Պարարտանյութը հավասարաչափ պետք է ցրել հողի մակերեսին, ապա հերկել 12 — 14 ամ խորությունը:

ՍՍԱՂԱՐԹԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Պաշտօնը ծառի երկարակեցությունը խոշոր չափով կախված է նրա սաղարթի հիմնական ճյուղերի և կեղևի ամուր և առողջ լինելուց. այդ տեսակետից մեծ ուշադրություն պետք է դարձնել ծառերի սաղարթը խնամելու վրա:

Անհրաժեշտ է ամեն տարի ծառի կեղևը մաքրել մեռած մասերից, նորմալ պայմաններ ստեղծելով ծառի աճեցողության և զարգացման համար:

Միաժամանակ պետք է ծառի հիվանդ, չորացած և վնասված ճյուղերը կտրել-հեռացնել այդուց կամ այրել:

Լուրջ ուշադրություն պետք է դարձնել այն ծառերի վրա, որոնք փարթամ աճեցողության հետևանքով ունենում են խիտ սաղարթ: Օգը, լույսը և արևը լավ չեն թափանցում սաղարթի ներսը, պտղաշիվերը մնում են չզարգացած, հետևաբար չեն պտղաբերի: Անհրաժեշտ է՝

ա) կտրել և հեռացնել այնպիսի ճյուղերը, որոնք աճում են սաղարթի մեջտեղում և խանգարում են կատարվող աշխատանքներին.

բ) հեռացնել այն ճյուղերը, որոնք ունեն խաչաձև դասավորում և հավում են միմյանց:

գ) կտրել այն հոռաշիվերը, որոնք խանգարում և պաղարեցնում են կարող:

Այդ աշխատանքները հարկավոր է կատարել վաղ գարնանը, մինչև ծառերի արթնանալը:

**ՊԱՅԳՍՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ**

Համեմատած մի շարք պաղատու ծառերի հետ, նշե-
նին հիվանդություններից և ֆլասատուներից քիչ է
տուժում:

Հայաստանի նշենիների վրա նկատվել են հետևյալ
հիվանդությունները.

ա) տերևների ծաղիտակեն բծավորություններ.

բ) տերևների կարմրախոց.

Վնասատուներից նկատվել են կեղևակերն ու լվիճը:

1. Ծ ա կ ո տ կ ե ն բ ծ ա վ ո Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը.—Այս հի-
վանդությունը տարածված է գրեթե բոլոր պաղարու-
ծական շրջաններում. նա վարակում է նշենին, ինչպես
և ամեն տեսակ կորիզավոր պաղատու ծառերի տերե-
ները, պտուղները և միամյա շիվերը:

Այս հիվանդությունն արտահայտվում է հետևյալ
կերպ. դարձանը, սկսած ապրիլ-մայիս ամիսներից, նշե-
նու տերևների վրա առաջանում են գորշ, դեղնավուն
բծեր, գորշ կարմրավուն երիզներով:

Որոշ ժամանակից հետո բիծը սկսում է չորանալ
մեջտեղից: Այդ տեղը փշրվում և թափվում է, որի հետե-
վանքով տերևների վրա առաջանում են զանազան ձևի
ու տարբեր մեծությունների բազմաթիվ ծաղիտակներ: Այս
պատճառով է, որ այս հիվանդությանը ծաղիտակեն բծա-
վորություն անունն են տվել:

Եթե հիվանդության դարգացման համար բարենպաստ
պայմաններ են լինում (հորդ անձրևներ), ապա տե-
րևների վրա առաջանում են մեծ քանակությամբ բծեր,
որի հետևանքով նրանք դադարում են ասիմիլիացիա

կատարելուց, սկսում են գեղնել և ժամանակից չուր
թափվել:

Բացի տերևներից, կանաչ շիվերը ևս վարակվում են
ծակոտկեն բծավոր հիվանդությունով: Այդ դեպքում
բծերն ավելի մեծ են լինում և երկարավուն, որոնք չո-
րանալիս եղբերից ճեղքվածքներ են առաջացնում. ճեղք-
վածքների շուրջը խեծ է առաջանում:

Պ ա յ ք ա ռ ի մ ի ջ ո ց ն ե ռ ւ .— ա) աշնանը կամ վաղ
գարնանը կտրել ծառերի վրա եղած ուժեղ վարակված
շիվերը, հավաքել և այրել:

բ) գարնանը, երբ բողբոջներն սկսում են ուռչել,
կատարել մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով սրսկում:

գ) ծաղկաթափից 10—15 օր հետո կատարել երկրորդ
սրսկում 0,75 տոկոսանոց բորդոյան հեղուկով:

դ) երկրորդ սրսկումից 15—20 օր հետո, երբ հիվան-
դությունը դեռ կանգ չի առել և շարունակվում է զար-
գանալ, անպայման կատարել երրորդ սրսկումը մեկ
տոկոսանոց բորդոյան հեղուկով:

2. Տ ե ռ ե ն ե ռ ի կ ա ռ մ ը ա խ ո ց ւ .—Այս հիվան-
դությամբ վարակվում են տերևները: Ամռան սկզբներին
տերևների վրա առաջանում են կանաչ-դեղնավուն,
կլոր, հազիվ նկատելի բծեր: Սրանք հետագայում մեծա-
նում և վառ կարմիր գույն են ստանում, որի հետե-
վանքով նկատելի են դառնում թե տերևի տակից և թե
վերևից:

Կարմրախոց հիվանդության զարգացմանը նպաս-
տում են անձրևային եղանակները:

Պ ա յ ք ա ռ ի մ ի ջ ո ց ն ե ռ ւ .

ա) աշնանը հավաքել բոլոր տերևները և այրել:

բ) դարձնանք ծաղկաթափից 10—12 օր հետո կատարել սրսկում 0,75 տոկոսանոց բորդոյան հեղուկով:

գ) առաջին սրսկումից 15—20 օր հետո կատարել երկրորդ սրսկում մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով:

3. Կ ե զ ե ա կ ե ր ն ե ր. — Սրանք փոքրիկ բղեղներ են մեկից մինչև ութը միլիմետր երկարությամբ: Կեղևավաղեցնելն ապրում են ծառերի կեղևի տակ և կրճելով են սնվում: Կեղևակերներից շատ հաճախ ծառերի ճյուղերն այնքան են թուլանում, որ չորանում են և կոտրվում:

Պայքարի միջոցները.

ա) կտրել վնասված ճյուղերը, հեռացնել և այրել:

բ) ծառերի բների վրա կապել որսող գոտիներ: Երբ նրանց մեջ հավաքված բղեղները ձու կղնեն, ոչնչացնել նրանց:

4. Լ վ ի ճ ն ե ր. — Սրանք փոքրիկ թևավոր և անթև միջատներ են, որոնք խմբերով նստում են տերևների վրա, ինչպես և մատաղ շիվերի, բնի և հաստ ճյուղերի վրա, ծծում են տերևների կամ բնի հյութը և մեծ քանակությամբ ծառին հատկապես այն է լինում, որ տերևները կուչ են դալիս, այլանդակ ձև ստանում և առտիճանաբար թափվում:

Պայքարի միջոցները.

ա) սրսկում են անաբաղին սուլֆատ կամ նիկոտին սուլֆատ:

բ) աշնանային սրսկում պոլիսուլֆիտով և մասամբ երկաթարջասպի լուծույթով, ձմեռող ձվերի դեմ:

**ՊԱԹԵԱՐԻ ԴԵՄԻԱՆՈՆ ՋԵՎԵՐՆ ԵՎ ԲՈՒԴԻՉ
ՆՈՌԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

Պաղատու ծառերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարելու ամենակարևոր ձևերից մեկը քիմիական նյութերով պայքարելն է, որ կատարվում է ծառերի սրսկման միջոցով:

Մակային հիվանդությունների դեմ պայքար է մղվում պղնձարջասպից կամ երկաթարջասպից պատրաստված լուծույթով, իսկ վնասատուների դեմ՝ անուրազին կամ նիկոտին սուլֆատով, սապոնով:

Բ ո Ր Դ Ո Յ Ա Ն Ի Ե Ղ Ր Է Կ .— Մեկ տոկոսանի բորդոյան հեղուկ պատրաստելու համար, պետք է վերցնել մեկ ղուլլ (12 լիտր) ջրին 120 գ պղնձարջասպ և 80—100 գրամ մաքուր չհանգած կիր: 0,75⁰/₁₀ բորդոյան հեղուկ պատրաստելու դեպքում պետք է վերցնել 90 գրամ պղնձարջասպ և 70—80 գ մաքուր չհանգած կիր: Հեղուկը պետք է պատրաստել փայտե տակառում. տակառի մեջ նրա կեսի չափով լցնում են որոշ քանակությամբ ջուր, ենթադրենք 50 լիտր. ապա մի տոպրակի մեջ լցնում են 1 կգ պղնձարջասպ և կախ են տալիս տակառի ջրի մեջ, Մի ուրիշ տակառի մեջ լցնում են 80—100 գ չհանգած կիր, մի քիչ ջուր սրսկում, որ կիրը հանգչի. այնուհետև աստիճանաբար ավելացնում են 50 լիտր ջուր և շարունակ փայտով խառնում, որպեսզի կիրը լուծվի ջրի հետ և դառնա կրակաթ: Պատրաստած կրակաթը քամելով, աստիճանաբար լցնում են մյուս տակառի մեջ, որտեղ լուծվել է պղնձարջասպը, նույնպես փայտով խառնում են և այսպիսով ստացվում է պարզ երկնագույն հեղուկ, որը և կոչվում է բորդոյան հեղուկ:

Ստուգելու համար, թե արդյոք բորդոյան հեղուկի

ռեակցիան ճիշտ է կատարվել, վերցնում են լակմուսի
կարմիր թուղթ և թաթախում հեղուկի մեջ, եթե վեր-
ջինս թեթև կապտում է, նշանակում է հեղուկը ճիշտ
է պատրաստված և նա ունի թույլ հիմքային ռեակցիա:

Երկաթարջասպ.— Երկաթարջասպը նույն-
պես պատրաստում են փայտե տակաոների մեջ:

Պտղատու ծառերի բուծման համար գործ են ածում
50/0 երկաթարջասպի լուծույթ. վերցնում են 100 լիտր
ջուր, նրա մեջ լուծում 5 կգ երկաթարջասպ և ստաց-
ված լուծույթով սրսկում ծառերը:

Նիկոտին սուլֆատ.— Մեկ լիտր ջրի մեջ լու-
ծում են մեկ գրամ նիկոտին-սուլֆատ և 4—5 գր.
սապոն:

Ֆենաբազին սուլֆատ.— Սա ունի նույն ազդե-
ցությունը, ինչ որ նիկոտինը: Մեկ լիտր ջրի մեջ լու-
ծում են մեկ գրամ ֆենաբազին սուլֆատ և 4—5 գր.
սապոն:

Սապոն.— Գործ են ածում կանաչ կամ սովորական
լվացքի սապոն: Մեկ դույլ ջրի մեջ լուծում են 300—400
գրամ սապոն. սապոնը նախ պետք է լուծել քիչ քա-
նակությամբ ջրի մեջ և միայն ավելացնել համապա-
տասխան քանակի ջրին:



ԲՈՎԱՆՑԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՌԱՋԱԲԱՆ	3
2. ՆՇԵՆՈՒ ԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	7
3. ՆՇԵՆՈՒ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	9
4. ՆՇԵՆՈՒ ՏՆԿԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ	12
5. Տնկարանի տեղի ընտրութիւնը	12
6. Տնկարանի հողամասի նախապատրաստումը	14
7. Սերմերի նախապատրաստումը և պահպանումը	15
8. Սերմերի ցանքը	16
9. Յանքի լինումըն առաջին դաշտում	17
10. Աչքապառլաստ	18
11. Վայրակների նախապատրաստումը պատկաստման հա- մար	18
12. Կարոնների միերումը	19
13. Աչքապառլաստի տեխնիկան	20
14. Տնկիների տաղարթի ձևափոխումը	24
15. Մտղարթի ձևափոխման տեխնիկան փոփոխված լիզե- րային եղանակով	27
16. Տնկիներէի պահանջվող սրակը	28
17. Տնկիները հանելը հողից (տնկարանից)	29
18. Տնկիների հակափոքումն ու փոխադրումը	31
19. ՆՈՐ ԱՅԳՈՒ ՏՆԿՈՒՄԸ	31
20. Այգու տեղի ընտրութիւնը	32
21. Հողի նախապատրաստումն աղբամուղման համար	33
22. Շարքերին ուղղութիւն տալը	34
23. Հողամասի տնդաձևումը	35
24. Փոսերի փորելը և տնկիների տնկումը	36
25. Տնկանյութի նախապատրաստումը տնկելու համար	36
26. Տնկելու տեխնիկան	37

27.	Նշենու աղիւտնկման ժամկետը	38
28.	Տնկիւնների դասավորումն աղիւտ և փոշոտիչներէ աղա- նովումը	39
29.	Նշենու սորոտերը	40
30.	Նորատունկ աղիւտ խնամքը և մշակումը	45
31.	Աղաբթի հիմնական հյուղերի էտը	45
32.	Փոփոխված լիդերային եղանակով ձեռնորման շարու- նակելը նորատունկ աղիւտ	47
33.	Ուտում	48
34.	Նորատունկ աղիւտ միջարքային տարածութեան օգտա- գործումը	54
35.	ԲԵՐՔԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ	55
36.	Աղիւտ հողի մշակութիւնը	56
37.	Աղիւտ ջրելը	58
38.	Պարարտացում	58
39.	Աղաբթի կանոնավորումը	60
40.	Պաշար հիմնադրութիւնների և փնտմատունների դեմ	61
41.	Պաշարի բիմիական ձեւերն և բուժիչ հյուսթերի պատ- րաստումը	64



Գառ. խմբագիր՝

Գ. Մ. Ս ա հ ա կ յ ա ն

ՎՅ 2405 Գառուի 282. Տիր. 1500. Տպ. 21/8 մամ.

Մեկ մամուլ. 29600 նշան. Հեղ. 2¹/₂ մամ.

Ստորագրված է տպագրության համար 7/IV—1941 թ.

Հայտնորատի տպարան, Երևան, Լենինի, 65.

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037141

249

ԳԻՆԸ 1 Ռ. 40 Կ.

A $\frac{I}{2788}$

Ա. ՍԵՏՐՕՏՅԱՆ
Ագրօսկազանն
սօ Վրաշիվաննս մնճալ
(Ոա արմանսկօմ յազկե)
Արմգնզ 1941 Երեվան